Ազգ
Azg
1 ՕԳՈՍՏՈՍ 2013 ՀԻՆԳՇԱԲԹԻ 132(5215)
ISSN: 1829-1651

# Ռուստամ Իբրահիմբեկով. ընդդիմադիր թեկնածո՞ւ, թե՞ Կրեմլի գործակալ

Ադրբեջանական ընդդիմության պարագլուխները մեկնել էին Թբիլիսի, որտեղ նրանց ընդունել է նախագահի «միասնական թեկնածու» Ռուստամ Իբրահիմբեկովը: Որեւէ էական որոշում չի կայացվել: Հայտնի չի դարձել՝ Իբրահիմբեկովը կառաջադրվի՞ պաշտոնապես, կորոշի մուտք գործել Ադրբեջան՝ ի հակակշիռ իրեն ձերբակալելու սպառնալիքների, թե՞ ընդդիմությունը «կբոյկոտի ընտրությունները»:

Մամուլի համար արված կարճ հայտարարությամբ ընդդիմության ներկայացուցիչ Էլդար Նամազովը միայն ասել է, թե «Ազգային խորհուրդը (միացյալ ընդդիմության ներկայացուցչական մարմինը- Վ. Ա.) ինքը կորոշի ընտրությունների հարցում իր հետագա անելիքները»: Հայտնի է դարձել, որ Ռուստամ Իբրահիմբեկովը Թբիլիսիից ուղեւորվել է Մոսկվա՝ «լուծելու իրեն Ռուսաստանի քաղաքացիությունից զրկելու հարցը»:

Այս իմաստով ստեղծվել է բավական հետաքրքրական իրավիճակ: Ադրբեջանում նախագահի թեկնածուների առաջադրման ժամկետ է սահմանված առաջիկա ամսվա 19: Այսինքն, եթե մինչ այդ ՌԴ նախագահ Պուտինն Իբրահիմբեկովին չզրկի ռուսաստանյան քաղաքացիությունից, ապա վերջինս օրենքով կզրկվի Իլհամ Ալիեւի հետ մրցակցելու իրավունքից: Տես էջ 8

# «Արցախի ու նրա ժողովրդի ձեռքբերումներն առեւտրի ենթակա չեն»

## *ԼՂՀ արտաքին գործերի նախարար Կարեն Միրզոյանի բացառիկ հարցազրույցը «Ազգ»-ին*



**- Նախ՝ շնորհավորում ենք ԼՂՀ ԱԳՆ-ի 20-ամյակի կապակցությամբ: ԼՂՀ դիվանագիտությունն այս քսան տարիների ընթացքում ի՞նչ ձեռքբերումներ ու բացթողումներ է ունեցել:**

- Ինչպես յուրաքանչյուր հոբելյան, ԼՂՀ արտաքին գործերի նախարարության քսանամյակը լավ առիթ է հետադարձ հայացք ձգելու անցած ուղուն, գնահատելու ձեռքբերումները: Միաժամանակ, դա լավ առիթ է՝ հասկանալու, թե անցած ճանապարհի ընթացքում ի՞նչ բացթողումներ ենք ունեցել, համապատասխան դասեր քաղել եւ դրանցով առաջնորդվելով առաջ գնալ: Մեր նախարարությունը ստեղծվել է ծանրագույն պայմաններում, երբ պատերազմ էր ընթանում եւ Ղարաբաղի ժողովրդի առջեւ դրված էր գոյատեւման խնդիր: Սակայն այդ պայմաններում արդեն ակնհայտ էր, որ եթե ԼՂՀ ժողովուրդը որոշել է ստեղծել իր անկախ պետականությունը, ապա պետականության կարեւորագույն հատկանիշներից մեկն էլ ակտիվ եւ գործուն արտաքին քաղաքականություն վարելու ունակությունն է: Ստեղծման առաջին իսկ օրվանից դրվեց կարեւորագույն մի խնդիր՝ նպաստել հակամարտությունը ռազմականից դիվանագիտական դաշտ տեղափոխելուն եւ ապահովել ԼՂՀ անմիջական մասնակցությունը բանակցային գործընթացին: Դա հաջողվեց, եւ ԼՂՀ ԱԳՆ-ն իր գործուն մասնակցությունն ունեցավ մասնավորապես 1994-ի զինադադարի հաստատմանը: Հետպատերազմյան շրջանում մեր առջեւ դրված խնդիրները որոշակի փոփոխությունների ենթարկվեցին: Այսօր ԼՂՀ ԱԳՆ-ն կայացած պետական հաստատություն է, որն ունի իր առջեւ դրված հստակ խնդիրներ՝ ապահովել ԼՂՀ եւ նրա ազգաբնակչության շահերի պաշտպանությունն արտաքին աշխարհում: Մեր առջեւ դրված կարեւորագույն հարցերն են. Ադրբեջանի եւ Ղարաբաղի միջեւ հակամարտության խաղաղ կարգավորումը, ԼՂՀ միջազգային ճանաչումը, լիարժեք կապերի հաստատումն ու շփումների ապահովումն արտաքին աշխարհի հետ եւ ԼՂՀ-ի մասին օբյեկտիվ եւ լիարժեք տեղեկատվության տարածումը:

**- Ձեր խոսքում ասացիք, որ այս ընթացքում եղել են նաեւ բացթողումներ: Կթվե՞ք առավել ակնառու սխալները:**

- Միշտ էլ կարելի է գտնել բացթողում. երբ հետ ես նայում անցած ուղուն, հասկանում ես, որ այդ պահին միգուցե կարելի էր գնալ այլ ուղղությամբ: Բայց պետք է ասեմ, որ սկսած ԼՂՀ արտաքին գործերի առաջին նախարարից մինչ օրս, նրա բոլոր ղեկավարներն ու աշխատակիցներն աշխատել են մեկ ուղղությամբ՝ առաջ տանել եւ պաշտպանել ԼՂՀ շահերը: Հետադարձ հայացք գցելով, այո, պետք է խոստովանենք, որ որոշակի թերացումներ եղել են, դրանք գուցե նաեւ նրանով էին պայմանավորված, որ ԱԳՆ-ն նոր հաստատություն էր Արցախի համար, բացակայում էին համապատասխան կադրերը, զգացվում էր աշխատանքային փորձի պակաս, բայց ընդհանուր առմամբ, պետք է արժանին մատուցենք այն մարդկանց, որ տարիներ շարունակ աշխատել եւ աշխատում են ԼՂՀ ԱԳՆ համակարգում:

Տես էջ 3

# Երկու զոհ հայկական բանակում

**ՀՀ ՊՆ զորամասերից մեկում ժամկետային զինծառայող շարքային Մանուչար Մանուչարյանը պահակակետի դիտաշտարակում, ըստ նախնական տվյալների, իրեն ամրակցված ԱԿՍ-74 տիպի ինքնաձիգից ինքն իրեն հասցրել է մահացու հրազենային վիրավորում: Հարուցվել է քրեական գործ ՀՀ ՔՕ 110 հոդվածի 1-ին մասով՝ ինքնասպանության հասցնելու հատկանիշներով:**

**Զինծառայող է զոհվել նաեւ ԼՂՀ հյուսիսարեւելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական դիրքերից մեկում: Մահացու վիրավորում է ստացել 1993-ին ծնված զինծառայող Արման Մուրադյանը:**

# Համեմատաբար սառը օգոստոս

**ԱԻՆ հիդրոմետ ծառայության օդերեւութաբանական կանխատեսումների կենտրոնի պետի տեղակալ Գագիկ Սուրենյանի փոխանցմամբ՝ այս տարի սպասվում է ավելի սառը օգոստոս, քան եղել է սովորաբար: Ըստ նրա՝ կախված տվյալ օրվա օդային զանգվածների ներթափանցումից՝ կլինեն ե՛ւ տաք, ե՛ւ համեմատաբար սառը օրեր:**

**Հյուսիսային շրջաններում պարբերաբար երեւացող տեղումների առկայության պատճառը, ըստ Գագիկ Սուրենյանի, այն է, որ արեւադարձային տաք հոսանքներն իրենց տեղը զիջում են: Իսկ երաշտների մասին խոսք լինել անգամ չի կարող, քանի որ տեղումների պակաս հանրապետության շրջաններում չենք ունեցել:**

**Երեկ՝ ասուլիսի ժամանակ, Գագիկ Սուրենյանը նշեց նաեւ, որ օգոստոս ամսին օդի միջին ջերմաստիճանը լինելու է մի աստիճանով ցածր, այսինքն՝ լինելու է ավելի սառը օգոստոս, քան մյուս տարիներին: Օգոստոսին Արարատյան դաշտում եւ մայրաքաղաքում կարող է լինել ջերմաստիճանի բարձրացում մինչեւ 36-37 աստիճան, իսկ գիշերը՝ նվազում մինչեւ 13 աստիճանով: Բանախոսը եղանակային փոփոխությունները պայմանավորում է Սեւ ծովից թափանցող մթնոլորտային սուր փոփոխություններով: Օգոստոս ամսին, ըստ նրա, Արարատյան դաշտում եւ մայրաքաղաքում նորմայի սահմաններում 4-5 օր կլինեն տեղումներ կարճատեւ անձրեւի եւ ամպրոպի տեսքով, իսկ հյուսիսային շրջաններում սպասվում են տեղումներ 7-10 օր:**

**Գագիկ Սուրենյանի փոխանցմամբ՝ այսօր ու վաղը սպասվում է առավելապես առանց տեղումների եղանակ, սակայն ամսի 2-3-ին հյուսիսային շրջաններում կդիտվեն կարճատեւ անձրեւ ու ամպրոպ: Իսկ հարավային կեսում տեղումների հավանականությունը փոքր է:**

Ի. Պ.

# Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովում ընդունվեց Նորվան արք. Զաքարյանի հրաժարականը

Հուլիսի 30-31-ին Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում, Գարեգին Բ Ծայրագույն պատրիարք եւ Ամենայն հայոց կաթողիկոսի բարձր նախագահությամբ, գումարվեց Գերագույն հոգեւոր խորհրդի հերթական ժողովը՝ ընդլայնված կազմով:

Ժողովի սկզբում Ամենայն հայոց կաթողիկոսը իր գնահատանքը բերեց խորհրդի անդամներին, որ ընդառաջ հրավերին ժամանել են Մայր աթոռ՝ քննարկելու Հայաստանյայց առաքելական եկեղեցու առջեւ ծառացած զանազան մարտահրավերներ, հայ հավատացելոց կյանքը հուզող խնդիրներ:



Ժողովի նիստերն ատենապետեց Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքության պատրիարքական ընդհանուր փոխանորդ Արամ արքեպիսկոպոս Աթեշյանը:

Գերագույն հոգեւոր խորհրդին Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված՝ Մայր աթոռի միջոցառումների վերաբերյալ զեկույց ներկայացրեց հանձնախմբի ատենապետ, ԱՄՆ Արեւմտյան հայոց թեմի առաջնորդ Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը: Ժողովականներն իրենց գնահատանքը հայտնեցին հանձնախմբին՝ հանձնարարելով շարունակել միջոցառումների ամբողջացման եւ նախապատրաստման աշխատանքները:

Տես էջ 2

# PKK-ի 2-րդ վերջնագիրը Թուրքիային

«**Ազգ**»-ի հուլիսի 27-ի համարում «Եթե Անկարան մինչեւ հոկտեմբերի 15-ը քայլ չկատարի, ապա չեղյալ ենք հայտարարելու հրադադարը» վերնագրով տեղեկացրել էինք Հյուսիսային Իրաքում ապաստանած քրդական այս կազմակերպության ղեկավարներից Սաբրի Օքի վերջնագրի մասին:

Երեկ odatv.com-ն էլ տեղեկացրեց կազմակերպության մեկ այլ ղեկավարի՝ Դիյար Ղամեշլուի հայտարարության մասին, որը նա արել է Լոնդոնում հրատարակվող «Շարք ալ Աուսաթ» թերթին: Ղամեշլուն ասել է, որ PKK-ն հաշտեցման գործընթացի շրջանակներում առաջընթաց քայլ ձեռնարկելու համար սեպտեմբեր ամիսը որպես վերջնաժամկետ է ներկայացնում Թուրքիային: Ըստ նրա՝ PKK-ն այս գործընթացին լրջորեն է մոտենում, շարունակվում է կազմակերպության մարտիկների նահանջը, եւ դա շուտով կավարտվի:

Ղամեշլուն պահանջել է, որ Թուրքիան հաշտեցման փուլից անցնի քրդական հարցի կարգավորման փուլին, եւ ավելացրել է. «Դա Թուրքիայում բնակվող ավելի քան 25 միլիոն մարդկանց խնդիրն է, պետք է լուծում գտնի»:

Ընդառաջ քայլ ասելով PKK-ն հասկանում է ճանաչել քրդական ինքնությունը Թուրքիայում, քրդերին տրամադրել մայրենի լեզվով կրթություն եւ ընդլայնել տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները:

Մի առիթով գրել էինք, որ այս պահանջները կատարելու համար վարչապետ Էրդողանի կառավարությանն անհրաժեշտ է սահմանադրության կամ սահմանադրական համապատասխան հոդվածների փոփոխություն, իսկ դա մինչեւ սեպտեմբեր ոչ մի կերպ չի հաջողվի իրագործել: Մտածել, որ PKK-ն չգիտի այդ մասին, իրատեսական չի լինի: Այդ դեպքում ինչո՞ւ վերջնագիր է ներկայացնում Թուրքիային: Ըստ երեւույթին, թուրքական կողմի հետ բանակցություններում դիրքեր ամրապնդելու, ինչպես նաեւ համազգային քրդական համագումարին որպես վերջնագիր ներկայացնող եւ հաշտությանը ձգտող կողմ ներկայանալու նպատակով:

Ի դեպ, այս համագումարը նախատեսվում է օգոստոսի 19-ին հրավիրել Էրբիլում: Այդ մասին երեկ Հյուսիսային Իրաքում հայտարարել է համագումարի կազմկոմիտեն: Այլ կերպ՝ PKK-ն սպասում է համագումարի արդյունքներին: Ինչպես եւ Թուրքիան, հավանաբար ճշտելու իրենց դիրքորոշումը հաշտեցման եւ քրդական հարցի կարգավորման գործընթացներում:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

# Նավթի եւ գազի որոնումից մինչեւ տավարի մսի արտադրության ավելացում

Հայաստանի ընդերքում նավթի եւ բնական գազի առկայության հավանականությունը պահպանվում է, եւ կառավարությունը այս տարվա ընթացքում կկանոնակարգի դրանց երկրաբանական ուսումնասիրությունների եւ արդյունահանման նպատակով իրավունքի տրամադրման գործընթացը: Դա ընդգրկված է ՀՀ կառավարության 2013-ի գերակա խնդիրների եւ գործունեության միջոցառումների մեջ: Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարությանը վերապահված խնդիրների թվում է հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգման ծրագրի ներկայացումը, համաձայն որի, ֆինանսական միջոցներ կտրամադրեն գործող ատոմակայանի ժամկետի երկարացման աշխատանքների համար: Նախարարության այս տարվա խնդիրների թվում են Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցումը, Վրաստան-Հայաստան տարանցիկ էներգափոխանակման վերաբերյալ համաձայնագրի կնքումը:

Բավականին հետաքրքրական են գյուղատնտեսության ոլորտում նախանշված խնդիրները: Մասնավորապես, նախատեսվում է տավարի դասական մսատու ցեղերի տոհմային կենդանիների ներկրման եւ տեղական տավարի հետ դրանց վերարտադրության ու տրամախաչման արդյունքում 32-40 կգ-ով ավելացնել մսի համար հանձնվող տավարի կենդանի զանգվածը: Դա հնարավորություն կընձեռի մինչեւ 2021-ը տավարի մսի տարեկան արտադրության ծավալն ավելացնել 10-11 հազար տոննայով եւ հասցնել շուրջ 60 հազար տոննայի՝ ինչն ամբողջությամբ կբավարարի տավարի մսի ներքին սպառման պահանջարկը:

Գյուղատնտեսության նախարարությունը պետք է կառավարությանը ներկայացնի ձկնաբուծության զարգացման հայեցակարգը, համաձայն որի, 25-30 տոկոսով կնվազի ձկնարտադրության նպատակով օգտագործվող քաղցրահամ ջրի սպառումը եւ շուրջ 2 անգամ կավելանան ձկան արտադրության ծավալները: Հիշեցնենք, որ հատկապես Արարատյան դաշտում վերջին տարիներին ստորգետնյա ջրերի լուրջ նվազում է արձանագրվում եւ նման մոտեցումն ուղղակի հրատապ է:

Ջերմոցային տնտեսությունների զարգացման հայեցակարգով էլ նախատեսվում է առաջիկա 3-5 տարիների ընթացքում ջերմոցային տնտեսությունների տարածքն ավելացնել 15-20 տոկոսով: Մեկ այլ ծրագրի իրականացմամբ աշխատանքներ են տարվելու չօգտագործվող վարելահողերի տարածքները 3-5 տարվա ընթացքում 12-15 տոկոսով կրճատելու համար:

Տրանսպորտի եւ կապի նախարարության գերակա խնդիրն է լինելու հյուսիս-հարավ ճանապարհի կառուցումը: Մասնավորապես, կշարունակվեն տրանշ-1՝ Երեւան-Աշտարակ, Երեւան-Արարատ հատվածների, տրանշ-2՝ Աշտարակ-Թալին հատվածի շինարարական աշխատանքները, միջոցառումներ կիրականացվեն տրանշ-3՝ Թալին-Գյումրի հատվածի շինարարական աշխատանքների նախապատրաստման ուղղությամբ:

2014-ին էկոնոմիկայի նախարարությունը խոստանում է ապահովել Հայաստան միջազգային զբոսաշրջային այցելությունների թվի 10 տոկոս աճ՝ 2013-ի համեմատ: Նախարարության 2014 թվականի «Զբոսաշրջությանն աջակցության ծառայություններ» ծրագրով, այդ նպատակին հասնելու համար նախատեսվում է միջազգային զբոսաշրջային շուկայում ներկայացնել Հայաստանի զբոսաշրջային արդյունքը (բացի դասական պատմամշակութայինից, նաեւ ձմեռային, առողջարանային, գյուղական, արկածային եւ այլ), երկարաձգել մեր երկրում զբոսաշրջային սեզոնը, կազմակերպել փառատոներ եւ այլ միջոցառումներ, մասնակցել 3 միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսներին:

Էկոնոմիկայի նախարարության գերակայությունների թվում են մնալու Հայաստանի գործարար միջավայրի բարելավումը, ՏՏ ոլորտում տեխնոլոգիական ձեռներեցությունը խթանող ենթակառուցվածքների զարգացումը, տնտեսության արտահանելի հատվածի ոլորտների ընդլայնումը՝ մասնավորապես արդյունաբերական քաղաքականության ռազմավարության շրջանակներում հաստատված ոլորտային ռազմավարությունների միջոցառումների ծրագրի իրագործումը:

«Երեւանի փոքր կենտրոնի կառուցապատման մասին» օրենքի նախագիծը եւս այս տարի կներկայացվի կառավարությանը: Հիշեցնենք, որ կառավարությունը արդեն հաստատել է Երեւանի փոքր կենտրոնի կառուցապատման հայեցակարգը: Օրենքի նախագծով ակնկալվում է Երեւանի կենտրոնի ճարտարապետական կերպարի միասնականության պահպանման, կառուցապատման, գեղագիտական միջավայրի կատարելագործմանն ուղղված քաղաքականության մշակում եւ իրագործում:

Քաղաքաշինության նախարարության մեկ այլ գերակա խնդիր է սոցիալական բնակարանային ֆոնդի ձեւավորման ռազմավարական ծրագրի մշակումը, ինչը ենթադրում է ցածր եւ միջին եկամուտ ունեցող ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման նպատակով սոցիալական բնակարանային ֆոնդի ձեւավորման իրավական հիմքերի, սկզբունքների, ուղղությունների ու ֆինանսավորման մեխանիզմների մշակումն ու հաստատումը:

Շարունակվելու է «Երիտասարդ ընտանիքին մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագիրը, ընդ որում, կառավարությունը խոստանում է դրա պայմանների բարելավում եւ շահառուների թվի աճ:

Բնապահպանության նախարարությունը պատրաստվելու է մինչեւ տարեվերջ 300 հազար հատ գեղարքունի եւ ամառային իշխանի մանրաձուկ աճեցնել եւ բաց թողնել Սեւանա լիճ, ինչպես նաեւ իրականացնել «Արփի լիճ» ազգային պարկի ստեղծմանն ուղղված միջոցառումներ:

Արտակարգ իրավիճակների նախարարության այս տարվա գործունեության միջոցառումների թվում է սեյսմիկ պաշտպանության ծառայության Գառնիի երկրաֆիզիկայի դիտարանի վերագործարկումը:

Առողջապահության նախարարության խնդիրներից ուշագրավ է «Ցորենի ալյուրի հարստացման մասին» օրենքի նախագծի մշակումն ու կառավարություն ներկայացնելը: Օրենքի ընդունմամբ կներդրվի ցորենի ալյուրի՝ միկրոտարրերով եւ վիտամիններով պարտադիր հարստացման համակարգը, որի արդյունքում ակնկալվում է, որ կկրճատվեն կանանց եւ երեխաների սակավարյունության, բնածին արատով նորածինների ծնունդների, տղամարդկանց մոտ սրտի կաթվածի դեպքերը:

Երեւանում ոստիկանությունը կշարունակի ճանապարհային երթեւեկության վերահսկողության նպատակով տեսախցիկների եւ արագաչափերի տեղադրումը: Շուրջ 30 խաչմերուկներում կտեղադրվեն 120 տեսախցիկներ եւ 50 արագաչափ սարքեր, որոնց մի մասը՝ նաեւ միջպետական նշանակության ավտոճանապարհներին:

Սրանք կառավարության այս տարվա գերակա խնդիրների եւ գործունեության միջոցառումների մի մասն են միայն: Մնում է հուսալ, որ դրանք ամբողջությամբ կիրագործվեն ժամանակին եւ արդյունավետ կլինեն:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ»

# Ամենամարդասիրական օրենքը՝ ըստ սոցիոլոգի

**«Սոցիալական աջակցության մասին» օրինագծին երեկ անդրադարձան Մամուլի ազգային ակումբում հյուրընկալված բանախոսները, որոնց տեղեկացմամբ՝ հուլիսի 19-ին արդեն եղել է օրինագծի հանրային քննարկումը:**



**«Սոցիոմետր» կենտրոնի տնօրեն Ահարոն Ադիբեկյանը նշեց՝ եթե օրենքն ընդունվի, ապա ընդունված օրենքների մեջ կլինի ամենամարդասիրականը: Ըստ նրա՝ «Սոցիալական աջակցության մասին» օրենքի միջոցով կձեւավորվի սոցիալական աշխատողի ինստիտուտը, որը պարտադիր կառույց է: Սոցիոլոգի հաշվարկներով՝ օրենքի կիրառումը կներգրավի շուրջ կես միլիոն շահառուի, որից միայն 180 հազարը հաշմանդամներն են: Օրինագիծը նախատեսում է ոչ միայն որեւէ տեսակի սոցիալական աջակցություն, այլեւ ուսում եւ մասնագիտացում շահառուների համար, որպեսզի հետագայում նույն մարդիկ ինքնուրույն կարողանան հոգալ իրենց սոցիալական խնդիրները, այլ ոչ թե դիմեն տարբեր ՀԿ-ների ու կառույցների օգնության խնդրով: Ըստ օրինագծի՝ կգործի նաեւ մեկ պատուհանի սկզբունքը, այսինքն՝ մարդիկ իրենց սոցիալական խնդիրներով կարող են դիմել մի կետի՝ դռնեդուռ ընկնելու փոխարեն: Նախագիծը նաեւ հնարավորություն է տալիս հասարակական կազմակերպություններին շարունակելու համագործակցել աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության հետ:**

**«Արագա» բարեգործական ՀԿ-ի նախագահ Թամարա Աբրահամյանը նշում է, որ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կողմից օրինագծերի մշակման գործընթացին իրենց կազմակերպությունն ունենում է ակտիվ մասնակցություն եւ կարողանում է ներկայացնել տեսակետներն ու իրավունքներն այն մարդկանց, որոնք օրինագծերի հաստատման դեպքում օգտվելու են դրանց կիրառումից: Ստացվում է, որ ՀԿ-ների միջոցով շահառուները կարող են իրենց կարծիքները տեղ հասցնել՝ անկախ նրանից, թե նախագծերը մշակելիս այդ կարծիքները որքանո՞վ են հաշվի առնում կամ ընդհանրապես հաշվի առնո՞ւմ են:**

Ի. Պ.

# Անվճար բուժօգնություն օգոստոսի 1-31-ը

**Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի նախաձեռնությամբ օգոստոսի 1-31-ը քաղաքապետարանի ենթակայության բուժհաստատություններում մայրաքաղաքի բնակչության համար կանցկացվի անվճար բուժօգնության ակցիա հետեւյալ ուղղություններով՝ սիրտանոթային հիվանդությունների հետազոտություն ու մասնագիտական խորհրդատվություն հիվանդներին, գինեկոլոգիական հիվանդությունների հետազոտություն եւ վիրահատություն, ինչպես նաեւ ուլտրաձայնային հետազոտության միջոցով վահանաձեւ գեղձի հիվանդությունների վաղ հայտնաբերում:**

**Երեւանի քաղաքապետարանից տեղեկացանք, որ ակցիայի օրերին համապատասխան բուժօգնություն ստանալու համար անհրաժեշտ է դիմել սպասարկող համաբուժարանի տեղամասային թերապեւտին կամ ընտանեկան բժշկին: Առաջին անգամ դիմող անձինք պետք է ներկայանան անձնագրով:**

**Համաբուժարանում անցնելով համապատասխան հետազոտություններ, ըստ անհրաժեշտության, հիվանդները կուղեգրվեն համապատասխան լրացուցիչ հետազոտությունների եւ ստացիոնար բուժման:**

Ի. Պ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովում ընդունվեց Նորվան արք. Զաքարյանի հրաժարականը

*1-ին էջից*

**Գերագույն հոգեւոր խորհուրդը նաեւ ի գիտություն ընդունեց Մայր աթոռի դիվանապետ Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի զեկույցը Թեմական ուղենիշային կանոնադրության պահանջներին թեմերի կանոնադրությունների համապատասխանեցման գործընթացի վերաբերյալ:**

**Տեղեկություններ ներկայացվեցին սեպտեմբերի 21-28-ը Մայր աթոռում գումարվելիք Հայ եկեղեցու ընդհանուր եպիսկոպոսաց ժողովի նախապատրաստական աշխատանքների մասին:**

**Եկեղեցական ներկայացուցչական ժողովի կանոնադրության նախագծի լրամշակման աշխատանքների մասին զեկույցով հանդես եկավ հանձնախմբի նախագահ, Տավուշի թեմի առաջնորդ Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը: ԳՀԽ անդամները գնահատանքով ընդունեցին զեկույցը՝ թելադրելով հանձնախմբին շարունակել կանոնադրության լրամշակման գործընթացը:**

**Գերագույն հոգեւոր խորհուրդը քննության առավ Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ, Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ Նորվան արքեպիսկոպոս Զաքարյանի հրաժարական գրությունը, ինչպես եւ Ֆրանսիայի հայոց թեմում դրան առնչված զարգացումների հետ կապված հարցեր:**

**Հետ քննարկության Գերագույն հոգեւոր խորհուրդն ընդունեց Նորվան արքեպիսկոպոս Զաքարյանի հրաժարականը Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդի, Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակի պաշտոնից եւ Գերագույն հոգեւոր խորհրդի անդամությունից եւ խնդրանք ներկայացրեց Վեհափառ հայրապետին հաստատելու այն:**

**Գերագույն հոգեւոր խորհուրդը նաեւ ափսոսանք հայտնեց հրաժարականում Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Ամենայն հայոց կաթողիկոսի հասցեին ուղղված անհիմն գնահատականների առնչությամբ: Գերագույն հոգեւոր խորհուրդն իր զորակցությունը հայտնեց Ֆրանսիայի հայոց թեմի թեմական խորհրդին ստեղծված իրավիճակի կարգավորման գործում՝ հորդորելով նաեւ թեմի հավատացյալներին եւ ազգային հաստատություններին ու կազմակերպություններին՝ քրիստոնեական սիրո ոգով նպաստել Ֆրանսիայի հայոց թեմի բարեկարգությանը եւ շինությանը:**

# «Արցախի ու նրա ժողովրդի ձեռքբերումներն առեւտրի ենթակա չեն»

1-ին էջից

**- Պարոն նախարար, խոսեցիք որակյալ կադրերի մասին: Այսօր ԱԳՆ-ն ունի կադրեր, եւ որտե՞ղ են նրանք վերապատրաստվում:**

- Շատ կարեւոր է ապահովել համակարգը կադրերով, նաեւ իրականացնել սերնդափոխություն: Այդ ուղղությամբ մենք տանում ենք որոշակի աշխատանք, դիվանագիտական ծառայության մասին օրենքի պահանջներին համապատասխան՝ պարբերաբար անցկացվում են արտաքին մրցույթներ, ինչը մեզ թույլ է տալիս դիվանագիտական ծառայության ընդունել Արցախի շնորհալի երիտասարդների, ովքեր, ընդունվելով դիվանագիտական ծառայության, համալրում են մեր շարքերը: Մենք օգտագործում ենք բոլոր հնարավորությունները՝ ապահովելու մեր դիվանագետների վերապատրաստումն արտասահմանյան տարբեր ուսումնական հաստատություններում: Պարբերաբար կազմակերպում ենք նաեւ զանազան դասընթացներ՝ դրսից հրավիրված մասնագետների մասնակցությամբ:

**- Ղարաբաղն առայժմ չճանաչված հանրապետություն է, սակայն ունի ներկայացուցչություններ մի շարք երկրներում: Այդ երկրների հետ ընթացակարգն ինչպիսի՞ն է:**

- Այո, մենք ունենք դիվանագիտական ներկայացուցչություններ Հայաստանում, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող եւ մի շարք այլ երկրներում: Հաշվի առնելով ԼՂՀ կարգավիճակը, որպես չճանաչված պետություն, առայժմ մեր ներկայացուցչությունները զրկված են որպես լիարժեք դիվանագիտական հաստատություն գործելու հնարավորությունից, սակայն իրենց կարողությունների սահմաններում իրականացնում են հետեւողական աշխատանք, որն ուղղված է ոչ միայն տվյալ երկրում Արցախի պետության շահերի ներկայացմանն ու հետապնդմանը, այլեւ աշխատանք են տանում Արցախի տնտեսության մեջ որոշակի ներդրումներ ապահովելու, նաեւ՝ Արցախի մասին ճշմարիտ տեղեկատվություն տարածելու նպատակով:

**- ԼՂՀ-ն համագործակցո՞ւմ է նաեւ այլ չճանաչված հանրապետությունների հետ:**

- Այո, մենք ունենք որոշակի հարաբերություններ Աբխազիայի, Հարավային Օսիայի, Մերձդնեստրի հետ, պարբերաբար տեղի են ունենում շփումներ տարբեր մակարդակներով: Վերջին նման շփումն այս տարի էր՝ Աբխազիայի ԱԳՆ 20-ամյակին նվիրված հանդիսավոր միջոցառումների ժամանակ, որի շրջանակներում տեղի ունեցավ նաեւ չորս հանրապետությունների ԱԳ նախարարների հանդիպումը: Այդ ձեւաչափը հետաքրքրական է եւ ոչ միայն յուրատեսակ հնարավորություն է «ստուգելու ժամացույցները», այլեւ առիթ է մտքեր փոխանակելու համագործակցության որոշակի եղանակների եւ ձեւերի շուրջը:

**- Արցախի միջազգային ճանաչումն ի՞նչ փուլում է գտնվում եւ որքանով է հարցն արդիական այսօր:**

- ԼՂՀ միջազգային ճանաչումը մեր քաղաքական օրակարգում է, այն ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի հանձնարարականն է եւ այդ ուղղությամբ հետեւողական աշխատանք ենք տանում: Այդ առումով, վերջին շրջանում կա որոշակի առաջխաղացում: Դրան նպաստում է այն հանգամանքը, որ օրեցօր համաշխարհային հանրության մեջ առավել գերակայող է դառնում այն միտումը, որ առկա հակամարտությունների կարգավորման ամենաօպտիմալ տարբերակը ժողովուրդների ինքնորոշման իրավունքն է, եւ դա շատ հզոր լծակ է, որ ամրապնդում է մեր դիրքորոշումն ու թույլ տալիս ձեռք բերել բազմաթիվ համախոհներ եւ բարեկամներ: Շատ կարեւոր են առկա այն ձեռքբերումները, որ ունենք Արցախում: Նախ այն, որ Արցախի պետությունը կայացել է եւ ապացուցել իր կենսունակությունը, ուժն ու կարողությունը՝ պաշտպանելու ոչ միայն իր շահերը, այլեւ ապահովելու բնակչությանը անհրաժեշտ սոցիալական պայմաններով եւ ազատություններով: Շատ կարեւոր հանգամանք է նաեւ, որ այսօր Արցախում տիրում է ազատության մթնոլորտ, որը, հատկապես որոշ հարեւանների հետ համեմատության մեջ, շատ ակնհայտ է: Այդ ամենն ամրապնդում է մեր դիրքորոշումը: Այս առումով, Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչումը եւ ԼՂՀ միջազգային ճանաչումն անխուսափելի են: Իհարկե, դա մեկ օրվա խնդիր չէ, մենք դա գիտակցում ենք եւ շարունակում ենք աշխատել:

**- Պարոն նախարար, խոսենք ԼՂ խնդրի կարգավորման բանակցություններից: Այսօր ի՞նչ փուլում են եւ որքանո՞վ են գոհացնում Ղարաբաղին եւ ԼՂՀ ժողովրդին:**

- Ինչպես գիտեք, խնդրի կարգավորումը իրականացվում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության շրջանակներում: Ժամանակ առ ժամանակ հնչում են քննադատություններ եռանախագահների հասցեին: Որոշակի առումով կարող ենք համաձայնել այդ քննադատությանը. իհարկե՝ որպես հակամարտության անմիջական կողմ, մենք շահագրգիռ ենք, որ հակամարտության վերջնական խաղաղ կարգավորման ելքը գտնվի, բայց նաեւ պետք է օբյեկտիվության համար ճիշտ գնահատական տանք ՄԽ համանախագահության գործունեությանը: Այսօրվա դրությամբ, դա միակ ձեւաչափն է, որը թույլ է տալիս պահպանել առկա փխրուն խաղաղությունը: Դա նաեւ այն ձեւաչափն է, որ որոշակի առումով թույլ է տալիս ԼՂՀ-ին ներգրավված լինել բանակցային գործընթացում, ներկայացնել իր տեսակետներն ու մոտեցումները: Բանակցությունների հիմնական խոչընդոտողը Ադրբեջանն է, որ մի քանի ուղղություններով միտումնավոր եւ հետեւողականորեն քայլեր է ձեռնարկում ոչ միայն դանդաղեցնելու բանակցային գործընթացը, այլեւ ուղղակի մտցնելու փակուղի. ապատեղեկատվության տարածումը հակամարտության մասին, բանակցությունների էությունը աղավաղելու փորձերը, նաեւ քարոզչական քայլերը, որ Ադրբեջանը ձեռնարկում է իր երկրում ներքին լսարանի համար, թեպետ համանախագահող երկրներն անընդհատ հորդորում են հրաժարվել ուժի կիրառման սպառնալիքից եւ պատրաստել ազգաբնակչությունը խաղաղության: Այս ամենը շատ ակնհայտ կերպով ցուցադրում է, որ բանակցային գործընթացում լուրջ առաջընթացի բացակայության հիմնական պատասխանատուն ադրբեջանական կողմն է:

**- Շատերն են քննադատում Մադրիդյան սկզբունքները՝ հայտարարելով, որ փաստաթղթում կան կետեր, որոնք որեւէ կերպ չեն արտահայտում Հայաստանի եւ ԼՂՀ-ի շահերը: Դուք համամի՞տ եք այդ ձեւակերպմանը:**

- Մեր արտաքին քաղաքականության մեջ մենք առաջնորդվում ենք մեր շահերով: Մեր մոտեցումը միանշանակ է, հստակ ու պարզ: Վերադարձ դեպի անցյալ անհնար է, Արցախի ու նրա ժողովրդի ձեռքբերումները, այն պետությունը, որ մենք այսօր ունենք, որեւէ սակարկության, առեւտրի ենթակա չեն: Եթե հարցը դիտարկում ենք այդ համատեքստում, ես կարծում եմ, որ պատասխանն ակնհայտ է:

**- Բազմիցս խոսվել է, որ ԼՂՀ-ն պետք է վերադառնա բանակցությունների սեղանին: Հայաստանը կարծես թե այդ առնչությամբ համաձայն է, ճի՞շտ է մեր տպավորությունը:**

- Այո, այսօր շատ անբնական իրավիճակ է ստեղծվել, երբ հակամարտության հիմնական կողմերից մեկն ուղղակիորեն ներգրավված չէ բանակցային գործընթացում: Ներգրավվածության այն մակարդակը, որն այսօր առկա է, չի բավարարում ղարաբաղյան կողմին, եւ, համոզված եմ, ոչ էլ ՄԽ համանախագահությանը: Դա կրկին Ադրբեջանի ոչ կառուցողական դիրքորոշման հետեւանքն է: Ինչպես գիտեք, բանակցային գործընթացի սկզբնական փուլում, երբ շատ կարեւոր որոշումներ էին ընդունվում, խոսք էր գնում պատերազմը դադարեցնելու եւ խնդիրը դեպի քաղաքական դաշտ տանելու մասին, Ղարաբաղը բանակցությունների անմիջական մասնակից է եղել եւ շատ առումներով՝ շնորհիվ Ղարաբաղի ակտիվ մասնակցության, հաջողվեց հասնել որոշակի ձեռքբերումների: Ցավոք, այսօր Ղարաբաղն այդքան էլ ակտիվ ներգրավված չէ բանակցային գործընթացում: Մեր տեսակետը պարբերաբար հասցնում ենք թե՛ համանախագահներին, թե՛ միջազգային այլ ատյաններին, որտեղ հնարավորություն է լինում այդ հարցը քննարկելու: Վերջերս կայացավ ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի հանդիպումը ԵԱՀԿ գործող նախագահ Լեոնիդ Կոժարայի հետ, որի ընթացքում այդ հարցը նույնպես բարձրացվել է, եւ մեր կողմից եւս մեկ անգամ շեշտվել դրա անհրաժեշտությունը: Հայաստանը ընդունում է մեր այդ դիրքորոշումը, դրա վկայությունն են այն բազմաթիվ հայտարարությունները, որոնք արվել են տարբեր, անգամ ամենաբարձր մակարդակով, թե ժամանակն է, որ ԼՂՀ-ն վերադառնա բանակցությունների սեղանին լիարժեք ձեւաչափով: Գնալով այդ կարծիքը դառնում է գերակայող՝ խնդրին առնչվող բոլոր կողմերի մեջ:

**- Կարո՞ղ ենք ասել, որ երբ 1997-ին Ղարաբաղը դուրս եկավ բանակցությունների սեղանից, դա ԼՂՀ ԱԳՆ-ի դիվանագիտական թերացումն էր, թե՞ դա ընդամենը ՀՀ այդ ժամանակվա նախագահ Ռոբերտ Քոչարյանի ցանկությունն էր, որին ղարաբաղյան կողմը դեմ չգնաց:**

- Չէի օգտագործի այդ ձեւակերպումը, որ Ղարաբաղը դուրս եկավ բանակցությունների սեղանից:

**- Պաշտոնապես դուրս եկավ բանակցություններից, Հայաստանը հայտարարեց, որ կներկայացնի նաեւ Ղարաբաղի շահերը:**

- Բանակցային գործընթացներն ունենում են իրենց տրամաբանությունը՝ կախված, թե ինչ խնդիր է քննարկվում եւ ինչ հարցեր են բարձրացվում: Բայց հիմնական խոչընդոտը, սկսյալ 1997-ից, Ադրբեջանի դիրքորոշումն է, որն ի շարունակություն բանակցությունների էությունն աղավաղելու իր քաղաքականության, փորձում է խոչընդոտներ հարուցել Արցախի լիարժեք մասնակցությանը, քաջ գիտակցելով, որ Արցախի մասնակցությունը բանակցություններին անխուսափելիորեն կբերի խնդրի տրամաբանական հանգուցալուծմանը, որն է՝ տարածաշրջանում երկու անկախ պետությունների միջեւ խաղաղ գոյակցության մեխանիզմների մշակումը:

**- Վերջին հարցը. ինչպե՞ս եք տեսնում խնդրի հանգուցալուծումը: Ի վերջո, եթե բանակցում ենք, ապա բանակցությունների այնպիսի վերջաբան պետք է լինի, որ ձեռնտու լինի կողմերին: Մեր շահերից ելնելով, ըստ Ձեզ, ո՞րն է վերջին «կարմիր թելը»:**

- Ես դեմ եմ, երբ բանակցություններում հանդես են գալիս՝ նախապես հայտնելով զիջումների սահմանը եւ այլն: Բանակցություններին ղարաբաղյան կողմը գնում է իր ձեռքբերումներն ամրագրելու, իր ազգային ազատագրական պայքարը, որի 25-ամյակը նշում ենք այս տարի, ավարտելու նպատակով: Դա ոչ թե ինքնանպատակ է, այլ ԼՂՀ ժողովրդի կամաարտահայտության արդյունք: Ի վերջո ԼՂՀ իշխանությունները գործում են՝ հիմք ընդունելով արցախահայության իղձերն ու կամքը:

Զրուցեց
ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ
Ստեփանակերտ, ԼՂՀ



*ԼՂՀ արտգործնախարարության շենքը*

# Արդյունաբերական վերելքի ակնկալությամբ

**Այս տարի լրանում է Սպիտակի ավերիչ երկրաշարժի 25 տարին: Գործազրկության բարձր մակարդակը Գյումրիում, Սպիտակում, Վանաձորում եւ մյուս բնակավայրերում ողբալի է: Պետք է օր առաջ ստեղծել պահանջվող աշխատատեղերը, վերացնել գործազրկությունը, կասեցնել արտագաղթը: Հայաստանի հելիոֆիկացիայի խորհուրդը քննարկման է դնում աղետի գոտում արեւային տեխնիկայի եւ տեխնոլոգիաների զարգացման խնդիրը՝ որպես մի գործուն ծրագիր Շիրակի եւ Լոռու մարզերի արդյունաբերական պոտենցիալի վերականգնման համար: Առաջարկվում է ստեղծել արեւային տեխնիկայի «Սպիտակ» գիտաարտադրական միավորումը Սպիտակ կենտրոնով, վերագործարկել աղետի գոտու բազմաթիվ գործարաններ՝ օգտագործելով տարածաշրջանի գիտական, ինժեներական եւ բանվորական ներուժը: Հայաստանի հելիոֆիկացիայի խորհուրդը այս խնդիրը նախապես քննարկել է Ռամկավար Ազատական կուսակցության հունիսի 18-ին կազմակերպած գիտաժողովում, ինչպես նաեւ Գյումրու, Սպիտակի, Վանաձորի եւ Արթիկի գործարարների մասնակցությամբ Սպիտակում հուլիսի 18-ին կայացած արտադրական խորհրդակցության ժամանակ: Առաջարկելով աշխատանքների թեմատիկ ուղղվածության եւ գործարանների տեղաբախշման մեր տարբերակը՝ մենք սիրով կընդունենք այլ առաջարկներ, որոնք կնպաստեն աշխատանքային տեմպերի արագացմանը: Մենք ի վիճակի ենք արդյունաբերական լուրջ վերելք արձանագրելու աղետի գոտում:**

ՎԱՀԱՆ ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆ
Հայաստանի հելիոֆիկացիայի խորհրդի անունից՝
խորհրդի նախագահ, տեխնիկական
գիտությունների դոկտոր
Հեռ. 37410 56-44-69, 37493 35-95-53
E-mail : technostandard @ mail.ru



# Helen Thomas

Այս տարվա հուլիսի 20-ին Վաշինգտոնի իր տանը, 92 տարեկանում վախճանվեց Սպիտակ տան լրատվական կորպուսի անդամ, «մամլո գրասենյակի առաջին լեդի» հորջորջված, վետերան լրագրող եւ գրքերի հեղինակ Հելեն Ամելիա Թոմասը:

Ուինչեստրում (Կենտուկի) 1920 թվի օգոստոսի 4-ին ծնված Հելենը Տրիպոլիից (այժմ՝ Լիբանանի 2-րդ քաղաքը) Մ. Նահանգներ ներգաղթած Ջորջ եւ Մերի (Ռովադի) Թոմաս զույգի ինը երեխաներից յոթերորդն էր: Հոր ազգանունը եղել էր «Անտոնիուս», որը Էլիս Այլենդ մուտք գործելուց հետո՝ ամերիկյան տարբերակով դարձել էր «Թոմաս»: Ծնողները գրել-կարդալ չեն իմացել: Չորս տարեկանից Հելենը հիմնականում մեծացել է Դետրոյթում, որտեղ հայրը մթերային խանութ է բացել: «Ընդհանուր առմամբ մեզ երբեք չեն առանձնացրել որպես ծնունդով արաբ ամերիկացիների: Մենք ամերիկացիներ էինք, եւ կարծում եմ բոլոր նրանք, ովքեր արդեն ձուլվել-մերվել են (բնիկների հետ), չպետք է զատորոշվեն էթնիկապես, մաշկի գույնից կամ դավանանքից ելնելով: Զատորոշելու փորձերը կճառայեն միայն ժողովրդի մասնատմանը», ասել է նա մի առիթով, հիշելով այդուհանդերձ, որ մի անգամ 1920 թվին դպրոցից տուն է վերադարձել լացելով եւ ասել՝ «մեզ սխտոր ուտողներ անվանեցին»:

## Նախագահական թղթակից-լրագրող

1960 թվի նոյեմբերից սկսվել է «նախագահականում» աշխատելու նրա փորձառությունը: Այդ օրերին Ջոն Քենեդին նոր էր ընտրվել Մ. Նահանգների նախագահ: 1961-ի հունվարին նա դարձել է UPI-ի Սպիտակ տան թղթակիցը: Այդ շրջանին է, որ նա վերականգնել է նախագահական հարցազրույցներից հետո «Շնորհակալություն, պարոն նախագահ», ասելու սովորությունը, որը Ֆրանկլին Ռուզվելտի ժամանակ օգտագործվել էր դարձյալ UPI-ի թղթակից Ալբերտ Մերիման Սմիթի կողմից, բայց հետագայում մոռացության մատնվել:

Նաեւ «Վաշինգտոն Թայմսը» եւ այլ լրատվական միջոցներ: UPI-ի հետ 57 տարվա համագործակցությունից հետո Հելենը հրաժարական է տալիս տնօրենության փոփոխությունը համարելով «չափազանց մեծ»: Քիչ ժամանակ անց նա միանում է «Hearst Newspapers» կազմակերպությանը, որպես սյունակագիր: Այդ օրվանից էլ նա իրեն ավելի ազատ է զգում արտահայտելու իր սեփական կարծիքը, որը երբեմն տհաճ կացությունների մեջ է գցել նրան:

Ջորջ Բուշ կրտսերի պաշտոնավարության առաջին շրջանում ահաբեկիչներին զենք մատակարարելու առիթով նա մամլո քարտուղարին բացատրել է, որ «պաղեստինցիները իրենց հայրենիքի համար են պայքարում»: Իսկ 2003-ին «Պրոֆեսիոնալ լրագրողների ընկերության» համար տրված խնջույքի ժամանակ իր ինքնագիրը պահանջող մի անձնավորության անկեղծորեն խոստովանել է, որ «լուսաբանում է Ամերիկայի պատմության մեջ ամենավատ նախագահի գործունեությունը»: Լինելով «Դեյլի Բրիզ» օրաթերթի սպորտային մեկնաբանը, այդ անծանոթը հրատարակում է նրա խոսքերը, որից հետո նա ստիպված է լինում ներողություն խնդրել նախագահից: Նրան դրանից հետո մամուլի ասուլիսների չեն հրավիրում, եւ ներկա գտնվելու դեպքում էլ նա ստիպված է լինում նստել վերջին շարքերում: «Ինձ այլեւս չեն սիրում: Շատ եմ տհաճ հարցեր տալիս», ասել է այդ առթիվ:

2006-ի մարտի 21-ին Բուշ կրտսերը երեք տարվա ընդմիջումից հետո նորից հրավիրում է Հելենին հարցազրույցի: Հելենը Բուշին հարցնում է Իրաքյան պատերազմի մասին: «Մինչեւ օրս Իրաք ներխուժելու Ձեր հրապարակած պատճառները անհիմն են եղել: Դուք ասել եք, որ դա նավթը չէր, ոչ էլ Իսրայելի անվտանգությունը: Ինչի՞ համար էր, ուրեմն, այդ պատերազմը»: Բուշը սկսել է քննարկել ահաբեկչության դեմ պայքարը, ասելով, որ Սադամ Հուսեյնը չի տրամադրում անհրաժեշտ տեղեկությունները եւ չի հանդուրժում վերահսկիչների ներկայությունը: Որոշ մեկնաբաններ Հելենին քննադատել են նման հարցադրումների համար:

Իսկ նույն տարվա հուլիսի 1-ին արտահայտվելով մամուլի նկատմամբ վարչակազմի դիրքորոշման մասին, Հելենն ասել է. «Մենք վերահսկողություն ունեցել ենք անցյալում, բայց ոչ այս չափի: Ես զարմացած եմ, որ խոսում եք թափանցիկության եւ բացախոսության մասին, բայց (միաժամանակ) վերահսկում եք»: Նրա կարծիքով նույնիսկ Ռիչարդ Նիքսոնի ժամանակ այդքան ուժեղ չէր վերահսկողությունը մամուլի նկատմամբ:

Հետաքրքական զուգադիպությամբ նախագահ Օբամայի եւ Հելեն Թոմասի ծննդյան թվականները նույն օրն են՝ օգոստոսի 4-ին: Եվ 2009-ի օգոստոսի 4-ին Օբաման նրան կեքս է նվիրել եւ «Ծնունդդ

«Today Show» ծրագրին տված իր հարցազրույցի ժամանակ նախագահ Օբաման նրա վերոնշյալ խոսքերը բնութագրել է «վիրավորական եւ անտեղի», իսկ հրաժարականի որոշումը՝ «ճիշտ»: Նա ակնարկել է, որ Հելենի հեինակությունը ունեցող անձի համար «ամոթալի է» կարիերայի նման ավարտը:

Նրան շատերն են քննադատել կառավարական շրջանակներում, բայց եղել են նաեւ նրան պաշտպանողներ, որոնք մատնանշել են «ծայրահեղ աջակողմյանների մոլեռանդությունը, կարծրատիպերը եւ կեղծիքները»:

WMRN ռադիոկայանի լրագրող Սքոթ Սպիլրգի հետ հարցազրույցում՝ 2011 թվի հոկտեմբերին, Հելենը ասել է. «Ես մասս դրեցի ցավոտ

# Մասնագիտությունը՝ լրագրող

*Մ. Նահանգների մեկ տասնյակ նախագահների հետ համագործակցած լրագրողուհու ողբականը*





շնորհավոր» երգել նախագահն այդ օրվա մամլո ասուլիսը:

## Պաղեստին-հրեական հակամարտության մասին

Ամերիկահրեաների ժառանգության տոնակատարության օրը՝ 2010-ի մայիսի 27-ին, Սպիտակ տան տարածքում տեսնելով Հելեն Թոմասին հյուսիսային դարպասից դուրս գալիս, ռաբբի Դեյվիդ Նեսենովը հարցրել է Իսրայելի մասին նրա կարծիքը: Հելենը պատասխանել է. «Ասեք հրեաներին, որ դուրս գան Պաղեստինից: Դա նրանց՝ պաղեստինցիների երկիրն է, ինչո՞ւ եք դուրս հանում նրանց իրենց դարավոր երկրից»: «Իսկ ո՞ւր գնան հրեաները» հարցին նա պատասխանել է. «Տուն, Լեհաստան, Գերմանիա, Ամերիկա կամ որեւէ այլ վայր»:

Կարճ հարցազրույցի այս հատվածը 2010-ի հունիսի 3-ին հայտնվել է Նեսենովի կայքէջում: Հաջորդ օրը Հելենը ստիպված է եղել ներողություն խնդրել իր կայքէջում: «Ես հավատացած եմ, որ խաղաղությունը կհաստատվի Մերձավոր Արեւելքում, երբ կողմերը հասկանան փոխադարձ հարգանքն ու հանդուրժողականության անհրաժեշտությունը», ասել է նա, հույս հայտնելով, որ այդ օրը շուտ կգա:

Բայց հարցը դրանով չի ավարտվել: «Նայն Սպիկըրս» ինկորպորացիան անմիջապես հրաժարվել է նրա ծառայություններից: «Լսիր, պարոն նախագահ» գրքի Հելենի հետ համահեղինակ Կրեյգ Կրոուֆորդն էլ դադարեցրել է իր համագործակցությունը գրքեր հրատարակելու ծրագրերում: Բեթեսդայում (Մերիլենդ) գտնվող Ուոլթ Ուիթմենի անվան ավագ դպրոցում նախատեսված Հելենի բանախոսությունը ավարտական հանդիսության օրը չեղյալ է հայտարարվել: «Պրոֆեսիոնալ լրագրողների ընկերությունն» էլ հետ է կանգնել նրան երկարամյա ծառայությունների համար մրցանակ շնորհելու գաղափարից:

## Հրաժարական

2010-ի հունիսի 7-ին Հելեն Թոմասը «Hearst News Papers» լրատվական գործակալությանն է ներկայացրել իր հրաժարականը աշխատանքից: Հաջորդ օրը NBC-ի

կողմի վրա: Այս երկրում չի կարելի քննադատել Իսրայելին եւ շարունակել հանգիստ ապրել»: Նա ավելացրել է, որ ներողություն է խնդրել իր խոսքերի համար, բայց իսրայելական ագրեսիայի վերաբերյալ մնում է նույն կարծիքին:

Դրանց առաջ արաբ ամերիկացիների ընկալումներին եւ պատկերացումներին նվիրված կոնֆերանսի ժամանակ Դիըրբոռնում (Միչիգան) նա լրագրողներին ասել է. «Ես տուժեցի, բայց արժեր ճշմարտությունը ասել: Կոնգրեսը, Սպիտակ տունը, Հոլիվուդը եւ Ուոլ Սթրիթը ամբողջությամբ պատկանում են սիոնիստներին: Կասկած չունեմ»: Բայց հերքել է այն կարծիքները, որ ինքը հակասեմական է: «Ես ինքս եմ սեմական», ասել է նա՝ ակնարկելով իր արաբական ծագումը:

Այդ հարցում նրան պաշտպանողներ եղել են, եւ 2011-ի հունվարից մինչեւ 2012-ի հունվարը նրան որպես սյունակագիր աշխատանքի է վերցրել «Falls Church News-Press» գործակալությունը, որի սեփականատեր Նիկոլաս Բենտոնը քննադատել է բոլոր նրանց, ովքեր վերջին շրջանում զրկել են Հելենին մրցանակներից:

## Անձնական կյանքը

Հելենն իրեն համարել է լիբերալ: Աշխատանքը, կարիերան դասել է անձնական կյանքից վեր, ավելի բարձր: 51 տարեկանում ամուսնացել է գործընկերոջ՝ Դուգլաս Կոռնելի հետ (Ասոշիեթեդ Պրեսից), որը չորս տարի անց Ալցհայմերի հիվանդությամբ է սկսել տառապել, եւ Հելենը ստիպված է եղել խնամել նրան մինչեւ նրա մահը՝ 1982-ին:

Մինչեւ կյանքի վերջին շրջանի անախորժությունները, Հելենն իր արհեստավարժ մասնագիտության համար բազմիցս է գովասանքների արժանացել եւ մրցանակներ ստացել Կանզաս եւ Ուեյն համալսարաններից, «Ֆրիդոմ ֆորումից», Պաղեստինի ազատագրության կազմակերպությունից եւ այլ հաստատություններից:

Հատկանշական է նախագահ Օբամայի բնութագրումը. «Նա իսկական առաջամարտիկ էր եւ նախագահներին, ներառյալ նաեւ ինձ, մշտական զգոն վիճակում էր պահում»:

Համակարգչային նյութերի հիման վրա պատրաստեց
Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆԸ

## Կարիերայի վաղ շրջանը

Ավագ դպրոց հաճախելու տարիներից քրիստոնյա արաբ Հելենն արդեն որոշել է դառնալ լրագրող: Բակալավրի աստիճան է ստացել 1942-ին Դետրոյթի Ուեյն համալսարանից: Ապա տեղափոխվել է Վաշինգտոն, որտեղ աշխատակցել է «Վաշինգտոն դեյլի նյուզ» օրաթերթին (այժմ դադարեցված): Ութ ամիս աշխատելուց հետո, մասնակցել է աշխատակիցների գործադուլին եւ վտարվել աշխատանքից: 1943-ին «Յունայտիդ պրեսին» է միացել եւ դրա կաբելային ծառայությունների ցանցում լուսաբանել կանանց վերաբերող թեմաներ: Վաստակել է շաբաթական 24 դոլար, որն այսօրվա հաշվարկներով համազոր է 318 դոլարի: 50-ականների սկզբներին սկսել է վարել «Անվանի մարդիկ» ծրագիրը: Հարցազրույց է ունեցել բազմաթիվ ականավոր մարդկանց հետ: 1955-ին նրան հանձնարարել են լուսաբանել Արդարադատության, այնուհետեւ նաեւ Առողջապահության նախարարությունների գործունեությունները: 1959-60 թվերին ընտրվել է նախագահ «կանանց մամուլի ազգային ակումբի», որի նախաձեռնությամբ կանայք առաջին անգամ իրավունք են ձեռք բերել ներկա գտնվել այդ ժամանակ Ամերիկա այցելող Խորհրդային Միության առաջնորդ Նիկիտա Խրուշչովի ելույթին:

«Քրիսչըն Սայնս Մոնիտոր» թերթում 2008-ին տպագրված մի հոդված Հելենին բնութագրում էր, որպես «շիտակ, անողոք, համոզիչ եւ պահանջկոտ» մի թղթակցի, որին ոչ միայն հարգում են Մ. Նահանգներում, այլեւ ճանաչում ամբողջ աշխարհում: Նրա հորդորանքով է, որ 1962-ին նախագահ Քենեդին որոշում է արձակում Սպիտակ տան տղամարդ եւ կին թղթակիցների համար մինչ այդ առանձին կազմակերպված տարեկան ճաշկերույթները միացնելու մեկ ընդհանուր հանդիսության: 1970-ին UPI-ը նրան նշանակում է գլխավոր թղթակից՝ Սպիտակ տանը: Նա դառնում է առաջին կինը, որն զբաղեցնում է UPI-ի Սպիտակ տան գրասենյակի ղեկավարի պաշտոնը 1974-ին:

Նա նաեւ միակ կին լրագրողն է դառնում, որն առաջին անգամ նախագահ Ռիչարդ Նիքսոնի հետ Չինաստան է մեկնում 1972-ին: Դրանից հետո նա իրարահաջորդ նախագահների հետ շրջել է ամբողջ աշխարհը: 1975-ից սկսած նա լուսաբանել է յուրաքանչյուր «Տնտեսական գագաթնաժողով» եւ իր պաշտոնում մնացել ավելի քան 25 տարի: Այդ ամբողջ ընթացքում նա UPI-ի համար պատրաստել է «Սպիտակ տան կուլիսներում» խորագիրը կրող կանոնավոր հաղորդագրություններ:

1975-ին «Գրիդիրոն կլաբ» անունով ճանաչված «Վաշինգտոնի մամուլի կորպուսի ակումբը» Հելեն Թոմասին ընդունել է իր շարքերը, նրան դարձնելով առաջին կին անդամը: Իսկ 1975-76 թվերին նա ընտրվել է «Սպիտակ տան թղթակիցների ասոցիացիայի» նախագահ: Նա միակն էր թղթակիցներից, որն ուներ իրեն հատկացված հատուկ աթոռ Սպիտակ տան «Բրիֆինգների սենյակում»:

## Ջորջ Բուշ կրտսերի օրոք

Առանձնաշնորհյալ այս կարգավիճակը տեւում է մինչեւ 2000 թվի մայիսի 17-ը երբ հայտարարվում է, որ UPI-ը վաճառվել է «News World Communications» ինկորպորացիային, որը միջազգային մեդիա կոնգլոմերատ է՝ հիմնված եւ ղեկավարված «Unification Church»-ի (Միասնական եկեղեցի) առաջնորդ, վերապատվելի Սան Միունգ Մունի կողմից: Վերջինիս է պատկանում

լրագրողների ընկերության» համար տրված խնջույքի ժամանակ ...

## Օբամայի վարչակազմի օրոք

Նորընտիր նախագահ Օբամայի առաջին մամլո ասուլիսի օրը՝ 2009-ի փետրվարի 9-ին Հելենը դարձյալ հայտնվել է առաջին շարքում: Հարգելով նրա երկարամյա ծառայությունները, Օբաման նրան խոստովանել է. «Շատ եմ հուզվում, Հելեն: Սա հանդիսավոր պահ է ինձ համար»: Հելենը նրան հարցրել է, թե արդյոք Մերձավոր Արեւելքի որեւէ երկիր միջուկային զենք ունի՞, իր կարծիքով: Օբաման պատասխանել է, որ չի ցանկանում «ենթադրություններ անել» այդ հարցում:

Նույն տարվա հուլիսին «Հիլ» պարբերականին տված հարցազրույցի ժամանակ նա ասել է. «Այն օրը, որ Դիկ Չեյնին նախագահական թեկնածու առաջադրվի, ես ինքնասպան կլինեմ: Մեզ մեկ ուրիշ ստախոս պետք չէ: Դա տխուր օր կլինի մեր երկրի համար»:

Մեկ ուրիշ անգամ, 2007-ի նոյեմբերի 30-ին, հարցը ուղղելով Սպիտակ տան մամլո քարտուղարին Հելենը հետաքրքրվել է Իրաքից ամերիկյան զորամիավորների հետ քաշման խնդրով: Հարցը վիրավորական եւ աբսուրդ է համարել Դանա Պերինոն. «Դուք ուզում եք ասել, որ դեռ ինչքան անմեղ մարդկանց ենք սպանելու այնտեղ: Մենք ցավում ենք այդ կորուստների համար», ասել է նա, որին Հելենը անմիջապես հակադարձել է. «Իսկ դուք գիտե՞ք ցավի արժեքը, կամ թե քանի՞ անմեղ մարդ է սպանվել»:

# Անպատիժ կեղծիքներ...

Ֆրանսիայի ժողովուրդը սովոր է վայելել անհանդարտութիւն (rubulence)... Քաղաքների, մանաւանդ Փարիզի փողոցները յաճախ ենթակայ են աշխոյժ ցոյցերի... Փողոցի տողանցքները այլեւս աւանդութիւն են, բողոքելու արդար իրաւունք: Դրանք երբեմն աւելի ազդեցիկ դեր ունեն պետական որոշումների նկատմամբ...

Թւում է, որ ներկայ տնտեսական լուրջ տագնապը այնքան էլ մտահոգիչ չէ՝ քան «բոլորի համար ամուսնութիւնը»... Դրա հետեւանքով միասեռական զոյգի որդեգրած երեխան այլեւս հայր-մայրի փոխարէն պիտի ունենայ ծնողք 1, ծնողք 2: Այդ էլ պիտի համարել La logique Carthe´sienne-ի մտահաւանութի՞ւն...

Դէ՛հ, արի զօրավար դը Գոլ, ու մի՛ խելագարուի...

Միասեռականների «արդարյուզիչ» ամուսնութեան պահանջը փոթորկալից ցոյցերից զատ, ահա տեղի տուեցին նաեւ նոր խռովութիւնների: Մի լուրջ կեղծիք: Եղան վաճառականներ, որոնք տաւարի մսի փոխարէն՝ «սուսիկ-փուսիկ» սահեցրին ձիու միսը մեծ քանակութեամբ: Այլ երկրներից ներածուած: Ստեղծուեց աղմկալի մի գայթակղութիւն: Թէպէտ ոչ մի զոհ չեղաւ, ոչ մի անձ չհիւանդացաւ: Ո՛չ էլ փողոցներում ցոյցեր տեղի ունեցան: Այնուամենայնիւ, համակրելի, սիրուած ձիու միսը իբր տաւար վաճառելը կեղծիք է: Անվիճելի:

Տարօրինակ է, որ անասունների տեսակի նկատմամբ նոյն խիստ մօտեցումը չկայ անունների նկատմամբ: Կեղծիքն ընդունելի է:

Օրինակ՝ Անատոլուի խորքերից պոկուել է մի հայի մնացորդ՝ Աթիլլա Եապանիօղլու եւ ապաստան գտել Փարիզում: Օրինակելի ֆրանսիացի քաղաքացի դառնալու ցանկութեամբ դիմել է քաղաքապետարան եւ յաջողել է կոչուել՝ Ֆելիքս Եաբանի: Մի ուրիշ էլ Մարսէյլում, Սալիմ Սիքթիրչի, լայիքօրէն մկրտուել է Էդմոն Սիքթիր...

Իհարկէ, պիտի նկատի առնել, որ օսմանեան եւ Աթաթուրքի «երջանիկ» տարիներին հաւանաբար ստիպուել են թաքնուել այդպիսի այլափոխուած «պիտակներով»: Սակայն այդ անունները իրականում կեղծիք են: Ոչ քրիստոնէական, ոչ իսկ «ծագումով հայկական»... Թաքցնում են հայու իսկական ինքնութիւնը: Անպատիժ մի կեղծիք եւ մի կեղտ, որին յաճախ վարժւում է հայը: Այդ պարագայում ինչո՞ւ են փոփոխության ենթարկել իրենց անունը:

Խօսք կայ, որ իբր թէ ցեղասպանութեան 100-րդ տարելիցին «ծպտուած» հայերը պիտի որոշեն հականեխուել եւ վերամկրտուիլ հայաբոյր հարազատ ազգանունով, որ մնան Վարդան Մամիկոնեանի եւ Ս. Մեսրոպ Մաշտոցի արժանի ժառանգները:

Պիտի չմոռանանք, որ կեղծիքի, խարդախութեան արուեստում գերազանց դիրք են գրավել Աթաթուրքի երդուեալները: Ի մասնաւորի ցեղապաշտ վարչապետ Էրդողանը: Դպրոցական պատմութեան գրքերից սկսեալ կարդում ենք՝ «հայերը ջարդել են մէկ միլիոն թուրք», իսկ Իգդիրում, Հայաստանի դիմաց, 1995-ին կառուցուել է քառասուն մեթր բարձրութեամբ հսկայ մի յուշարձան, նուիրուած այն «մէկ միլիոն զոհուած թուրքերի եւ ազերիների, 1918-1921 թթ., որոնց ջարդել են հայերը»:

Այս այլանդակ կեղծիքներից զատ բիւր գետակներ, գիւղեր թրքացած անուններով կոչուեցին: Աղթամարի կղզին մկրտուեց Աքտամար, որ թուրքերէն նշանակում է «սպիտակ երակ»...

Կեղծիքներ, կեղծիքներ, Արեւմուտքի պետութիւնների լուռ մեղսակցութեամբ: Այնպէս որ ճշմարտութիւնը այլեւս պատկանում է ուրիշ մոլորակի:

Մայրաքաղաք Անքարան էլ ահա յամառօրէն մնում է հերթի Եւրոպայի Միութեան մուտքին: Իսկ այդ մուտքի տոմսին արժանանալու համար կեղծիքապաշտ վարչապետ Էրդողանը Ֆրանսիայից գնում է ինքնաթիռներ եւ հիւլէական մի կայան: Այսինքն՝ մի քանի տասնեակ միլիարդ դոլարի աժդահա մի գնում: Մինչ Թուրքիան յանձնի մուտքի այդ տոմսը, շատ հաւանական է, որ մեր ցեղասպանութեան ճանաչման, կամ աւելի ճիշդ՝ ժխտողականութեան հարցը անուշադրութեան մատնուի, թաղուի արխիվում...

Թուրքիան, ուր հաստատուած են 100 ֆրանսիական ընկերութիւններ, 100.000 աշխատակիցներ, այլեւս այնպիսի հզօր մի կայսրութիւն է դառել, որի կատարած կեղծիքները ներելի են...

* * *

Ի միջայլոց նշեմ մի վկայութիւն: Առանց կարմրելու խոստովանեմ, որ մօտ բարեկամներիցս մէկը եղել է շերիֆ Ռեմզին: Իզմիրից, թուզի չրի մի վաճառական, մի թուրք, որին ծանօթացայ գործիս բերումով: Պարկեշտ մի անձնաւորութիւն, որ տիրապետում էր 7 լեզուների: Իր թուրք լինելը կարծես թիւրիմացութիւն լինէր... Իսկ իր գրասենեակի պատից կախուած էր Արթինեանի դիմանկարը: Այդ հայը, որին Ռեմզի բէյն ազատել էր 1922-ին ծանօթ թրքական վայրագ յարձակումների ժամանակ: Մի օր իր զուիցերիացի քարտուղարը ինձ պատմեց, որ Արթինեանը մահացել էր Նիսում եւ մահուան ամէն տարելիցին, նրա շիրմաքարի վրայ զետեղում էր մի ծաղկեպսակ «Շերիֆ Ռեմզի» մակագրութեամբ:

Հետաքրքրական մարդ էր Ռեմզի բէյը: Յաճախ ինձ հրաւիրում էր ճաշարան: Նա մօտ ծանօթ էր եղել Աթաթուրքին եւ Իսմեթ Ինոնյուին: Յիշում եմ, մի օր, զրոյցի պահին, ձեռքը դնելով ուսիս, մեղմ ժպիտով ասաց. «Ձեզ յայտնեմ, սիրելի բարեկամ, որ Աթաթուրքը շատ ուզում էր, որ Թուրքիան աւելի մօտ դառնայ Եւրոպային: Հենց այդ նպատակով էլ որոշեց, որ մեր լեզուի տառերը դառնան լատինական: Այդ բաւական չէր, նա ցանկացաւ, որ թուրքի «բիչիմը» (տեսքը) նմանուի եւրոպականի: Այսինքն՝ գլուխը ծածկի casquette-ով: Այս, ինչ մենք իրականում ունենք, մեր լեզուն, մեր կրօնը, մեր աւանդութիւնները, ինչո՞ւ թուրքը պիտի նմանի եւրոպաբնակչի: Ինչո՞ւ, մենք բնաւ կարիք չունենք այդ կեղծիքին: Թուրքը ո՛չ ֆրանսիացի է, ո՛չ իտալացի, ո՛չ իսպանացի: Թուրքը՝ թուրք է, վերջ: Գիտէ՞ք ինչ պատահեց, սիրելի բարեկամս, թուրքեր եղան, որոնք հնազանդեցին Աթաթուրքին: Միայն թէ թուրքը սովորական իր ֆէսի բարձրութիւնը կրճատեց եւ գլխին էլ կոխեց այդ «քասքեթը»: Այնպէս որ, այդ հնազանդ թուրքը, երբ վերցնէր եւրոպացու գլխարկը, նորից մնում էր նոյն թուրքը»: Ռեմզի բէյի այս ճշդումին հետեւեց իր ջերմ ծիծաղը:

Առակն ասում է. «Յաճախ երեխաների բերնից է դուրս գալիս ճշմարտութիւնը»: Բայց արի տես, որ հասուն թուրքին էլ է պատահում...

Իրաւ է, որ «Une Hirondelle ne fait das le Printemps»... («Մեկ ծիծեռնակով գարուն չի գա», ֆր.:)

**ՌՈԺԷ ՋՐԲԱՇԵԱՆ**

**Խաբիլը վուռն է, տո՞,**
**ինչից ես ասում:**
**Այս մեր քաղքումը որ մէկ միսին**
**Չի խաբի. մի օր կանա՞**
**մարդ ապրի**
**Կանա՞ վուս վուսի առջեւ դնի:**
**(«Խաթաբալա»,**
**Գ. Սունդուկեան)**



# ԱՄՆ-ում կհրապարակվեն ԱԱԳ լրտեսման վերաբերյալ գաղտնազերծված նյութեր




**ԱՄՆ իշխանությունները շուտով կհրապարակեն Ազգային անվտանգության գործակալության (ԱԱԳ) լրտեսման ծրագրերի վերաբերյալ վերջերս գաղտնազերծված նյութերը: Այդ մասին Ռոյթեր գործակալության թղթակցին հայտնել է հատուկ ծառայությունների աղբյուրներից մեկը:**

**Ամերիկյան ազգային հետախուզության տնօրենի աշխատակազմը փորձում է այդ ձեւով կատարել հատուկ ծառայությունների աշխատանքի թափանցիկությունը մեծացնելու խոստումը: ԱԱԳ-ին վերաբերող նյութերից բացի, ենթադրվում է տվյալներ հրապարակել այն հատուկ դատարանի գործունեության վերաբերյալ, որը լրտեսման ծրագրերի իրականացում է թույլատրում օտարերկրյա հատուկ ծառայությունների վերահսկման դաշնային օրենքին (FISA) համապատասխան:**

**ԱԱԳ տնօրեն Քիթ Ալեքսանդերը ողջունել է վարչակազմի որոշումը: Նրա խոսքերով, գաղտնազերծված տվյալների հրապարակումը «թույլ կտա բացատրել, թե մենք ինչ եւ ինչու ենք փորձում անել»:**

**2013-ի հունիսին ԱԱԳ-ն սկանդալի կենտրոնում էր հայտնվել ԿՀՎ եւ ԱԱԳ նախկին աշխատակից Էդվարդ Սնոուդենի կազմակերպած գաղտնի տեղեկությունների արտահոսքերի պատճառով: Պարզվել էր, որ հակահաբեկչական պայքարի պատրվակով ԱՄՆ հատուկ ծառայությունները տվյալներ են հավաքել համացանցից օգտվողների եւ հեռախոսացանցերի բաժանորդների նամակների ու հեռախոսազրույցների վերաբերյալ:**

**Սնոուդենի մերկացումների պատճառով ԱՄՆ կառավարությանը քննադատել էին ինչպես իրավապաշտպանները, այնպես էլ օտար պետությունները, որոնց քաղաքացիները լրտեսման թիրախ էին դարձել:**

# Մեննինգը մեղավոր ճանաչվեց լրտեսության մեջ

## *«Ասանժը դա համարում է «վտանգավոր նախադեպ»*



**Ամերիկյան զինվորական դատարանը 25-ամյա զինծառայող Բրեդլի Մեննինգին մեղավոր է ճանաչել լրտեսության եւ «հափշտակում» հոդվածի 5 դրվագների մեջ: Դատարանը Մեննինգին մեղավոր չի ճանաչել թշնամուն օժանդակելու մեջ: BBC-ն նշում է, որ հենց այդ հոդվածով նրան կսպառնար ցմահ բանտարկություն՝ առանց վաղաժամկետ ազատման իրավունքի:**

**ԿՀՎ աշխատակից, ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի քաղաքացի Մեննինգը մասնագիտացած է հետախուզական տվյալների վերլուծության մեջ: Նա ձերբակալվեց Բաղդադի շրջակայքում 2010-ի վերջերին: Սկզբում նրան ներկայացված մեղադրանքների թվում էին պետական կարեւոր փաստաթղթերի հափշտակումը եւ դրանց փոխանցումը թշնամուն: Ենթադրվում է, որ նրան սպառնում է մոտ 100 տարվա բանտարկություն:**

**Մեննինգը խոստովանեց, որ ինքը WikiLeaks կայքէջին փոխանցել է հարյուրհազարավոր գաղտնի փաստաթղթեր, բայց պնդեց, որ ինքը ձգտել է ամերիկյան հասարակության մեջ նպաստել արտաքին քաղաքականության առնչվող քննարկումներին:**

**Նա փոխանցել է Բաղդադում 2007-ին ռազմական ուղղաթիռից առնվազն 10 մարդու գնդակահարման տեսագրությունը, հրապարակել է Իրաքից եւ Աֆղանստանից ամերիկացի զինվորականների ուղարկած 470 հազար դաշտային զեկույցներ եւ ամերիկացի դիվանագետների 250 հազար հեռագրեր:**

**WikiLeaks-ի հիմնադիր Ջուլիան Ասանժը նախազգուշացրել է, որ ԱՄՆ բանակի շարքային Բրեդլի Մեննինգին ներկայացված լրտեսության մեղադրանքը կունենա վտանգավոր հետեւանքներ:**

**«Այդ մեղադրանքները ստեղծում են վտանգավոր նախադեպ: Մեննինգը մեղավոր չէ: Իրականում նա իրեն դրսեւորել է իբրեւ հերոս՝ իշխանություններից պահանջելով թափանցիկություն ու հաշվետվություն եւ ամերիկացիների ու ողջ աշխարհի առջեւ բացահայտել ԱՄՆ վարչակազմի հանցագործությունները», հայտարարել է Ասանժը:**

**Նրա խոսքերով, Մեննինգի դատավարությունը արդար չի եղել: Տեղեկությունների բացահայտման միակ զոհը դարձավ ամերիկյան վարչակազմի խոցված հպարտությունը, կարծում է Ասանժը: «WikiLeaks-ը չի հանգստանա, քանի դեռ Մեննինգը ազատ չի արձակվել», խոսացել է կայքէջի հիմնադիրը:**

**Պ. Ք.**

# «Սաուդցիները 1 մլրդ դոլար են վճարել Մուրսիի տապալման համար»

Սաուդյան Արաբիայի քաղաքական ակտիվիստներից մեկը պնդում է, թե թագավորությունը Եգիպտոսի զինվորականներին 1 մլրդ դոլար է վճարել հեղաշրջում կազմակերպելու եւ նախագահ Մուհամմեդ Մուրսիին տապալելու համար:

Ինչպես հաղորդում է «Վաշինգտոն թայմս» թերթը, Սաուդյան Արաբիայում կաշառակերության եւ կաշառատվության փաստերի բացահայտման մեջ մասնագիտացած ակտիվիստ Մուջահիդ բին Հարեթ բին Համամը պնդում է, որ հուլիսի 3-ին Էր Ռիադի իշխանությունները 1 մլրդ դոլար են փոխանցել եգիպտացի զինվորականներին:




Մուջահիդ բին Հարեթ բին Համամը կարծում է, որ ներկայումս թագավորության իշխանությունները կասկածում են իրենց արարքի խելամտությանը: Նրա խոսքերով, զինվորականների անհաջողության դեպքում Եգիպտոսի նոր կառավարությունը նախորդից ուժեղ կլինի եւ խիստ հակասաուդյան դիրք կբռնի:

Այս երկյուղների պատճառով է, որ Սաուդյան Արաբիայի Աբդուլլահ թագավորը փորձում է Արեւմուտքի երկրներին համոզել՝ չմիջամտելու Եգիպտոսի ներքին զարգացումներին եւ չխանգարելու եգիպտացի զինվորականների գործողություններին:

**Պ. Ք.**

# Արամ Խաչատրյանի 110-ամյակին նվիրված երեկո՝ իտալական Musica Riva միջազգային փառատոնում



Հուլիսի 30-ին՝ իտալական Musica Riva միջազգային փառատոնում հայկական երաժշտության տոն էր: Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբը՝ գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ, ներկայացրեց «Հայաստան-Իտալիա. կամուրջ Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ» խորագրով համերգային ծրագիրը՝ նվիրված հայ մեծ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի ծննդյան 110-ամյակին:

Հանդիսատեսով լեփ-լեցուն հրապարակում հայկական երաժշտության երեկոն անցավ բուռն ծափահարությունների ուղեկցությամբ: Երիտասարդական նվագախումբը կատարեց Արամ Խաչատրյանի ջութակի կոնցերտը, հատվածներ «Սպարտակ» եւ «Գայանե» բալետներից: Հայկական երաժշտության համերգին ներկա էին Իտալիայում ՀՀ դեսպան Սարգիս Ղազարյանը, Ռիվա դել Գարդայի քաղաքապետը: Երկու ժամ տեւած համերգը ցնծության մեջ պահեց ամբողջ Ռիվա դել Գարդան:

Հիշեցնենք, որ Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբը հրավիրված է որպես Musica Riva միջազգային փառատոնի պաշտոնական նվագախումբ: Մասնակցությունը երաժշտական այդ տոնին հնարավոր է դարձել ՀՀ մշակույթի նախարարության, Արթուր Վարժապետյանի՝ «Լուդինգ» ընկերության հիմնադիր նախագահի, եւ նվագախմբի շատ այլ ընկերների աջակցության շնորհիվ:

Փառատոնի շրջանակներում երիտասարդական նվագախումբը համերգ է տվել նաեւ աշխարհահռչակ դաշնակահար Ալդո Չիկոլինիի, թավջութակահար Նատալյա Գուտմանի հետ (դիրիժոր՝ Իսահակ Կարաբչեւսկի): Հուլիսի 27-ին՝ նվագախումբը կատարել է Վերդիի եւ Վագների ստեղծագործությունները (դիրիժոր՝ Մարկո Բոեմի), մենակատարներ՝ Միշելա Սբուրլաս (սոպրանո), Նկոսազանա Դիմանդե (սոպրանո), Յունգ Կվանգ Լի (բարիտոն):

Այսօր, օգոստոսի 1-ին, Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի հետ ելույթ կունենա Արամ Խաչատրյանի անվան 8-րդ միջազգային մրցույթի Գրան պրիի մրցանակակիր Ֆյոդոր Ռուդինը (ջութակ), իսկ օգոստոսի 3-ին նվագախումբը կներկայացնի Վերդիի «Ռեքվիեմը», դիրիժոր՝ Իսահակ Կարաբչեւսկի, մենակատարներ՝ Նկոսազանա Դիմանդե (սոպրանո), Աննա Վիկտորովա (սոպրանո), Խաչատուր Բադալյան (տենոր), Եվգենի Ստավինսկի (բաս):

Նշենք, որ 30-ամյա պատմություն ունեցող իտալական հեղինակավոր Musica Riva փառատոնն ամեն տարի իր սանիքի ներքո է համախմբում աշխարհահռչակ նվագախմբերի, մենակատարների, պարային խմբերի, երգչախմբերի, արվեստի աշխարհի նշանավոր ներկայացուցիչների՝ աշխարհի տարբեր ծայրերից:

*Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի հասարակայնության հետ կապերի բաժին*

# Հանրահայտ ռոք աստղը՝ Միք Ջագերը 70 տարեկան

**Անգլիացի հանրահայտ ռոք երաժիշտ, արտիստ, պրոդյուսեր, «The Rolling Stones» խմբի մենակատար Միք Ջագերն այս օրերին ստանում է հոբելյանական բազմաթիվ շնորհավորանքներ: 70-ամյա ռոքընդռոլի աստղի էնտուզիազմն ու էներգիան անսպառ են եւ ժամանակն ու տարիքը կարծես խնայում են նրան: Կյանքի մեծ ճանապարհ՝ երկու կին, բազմաթիվ երեխաներ, ասպետական կոչում, թագուհու բարեմաղթանքներ, փառք ու մեծարանք, միլիոնավոր վաճառված ալբոմներ, սակայն միեւնույն է, բեմը ձգում է արտիստին. դա իր տարերքն է, նա շարունակում է բեմ դուրս գալ մինչեւ այսօր. «Ինձ ուղղակի դուր է գալիս այն, ինչ ես անում եմ: Արտիստի բեմական տեւականության համար առանձնահատուկ ուրիշ գաղտնիք չկա: Պրոֆեսիոնալ քննադատներին գրեթե ուշադրություն չեմ դարձնում, որովհետեւ աշխատում եմ հանդիսատեսի համար, ոչ թե՝ նրանց կամ ժուռնալիստների: Տարիքային առումով հնարավոր է հանդիմանեն ինձ, թե ես անցնող կերպար եմ, արտիստի անցնող խառնվածք, սակայն ի հեճուկս այդպես մտածողների, ես դեռ այստեղ եմ, ուզում եմ աշխատել, երաժշտություն գրել, համերգներ ունենալ»:**

**Լոնդոնի տնտեսական եւ քաղաքական գիտությունների դպրոցը, որտեղ նա սովորում էր ամենավաղ տարիներին, կարելի է ասել բոլորովին չի հետաքրքրել Միք Ջագերին, ուսումը կիսատ է թողել : Այդ տարիներին միակ տեղը, որ հաճույքով էր հաճախում, երաժշտության դասերն էին:**

**Խումբը, որի առաջատար մենակատարն է նա երկար տարիներ՝ «The Rolling Stones»-ը այդպես անվանակոչվեց 1962-ին եւ նույն թվականին էլ առաջին ելույթն ունեցավ լոնդոնյան «Marquee» ակումբում: Միք Ջագերի բեմական կերպարն ընկալվել է որպես խիստ առանձնահատուկ արտիստիկ ձեռագրով օժտված**



**երգչի, որի ձայնի՝ երբեմն խոր, երբեմն կանացի-փափուկ երանգները, գայթակղիչ, ցանկասեր ժպիտը, բեմական էքսցենտրիզմը՝ շարժումների, տաք-ագրեսիվությունը նրան բերել են ամենաառաջատար ռոք աստղի անուն: Երաժշտական ասպարեզում Միք Ջագերի ծառայությունները բարձր են գնահատվել, 60-ականներին Ելիզավետա II թագուհին շնորհել է նրան Ասպետի կոչում:**

**Իր հարցազրույցներից մեկում երգիչը համեմատելով 1968-98-ականները, ասել է, որ եթե նախկինում սեքսի, նարկոտիկի եւ ռոքընդռոլի եռյակում սեքսն առաջին տեղն էր զբաղեցնում, հիմա դրան փոխարինել է նարկոտիկը: Տարիներ անց նա հայտարարել է, որ թողել է խմելը, ծխելը եւ նարկոտիկ ընդունելը: Պատճառն, իհարկե, նախ եւ առաջ առողջությունն է: «Ինձ համար թանկ է անվանս պատիվը,- ասել է նա, չեմ ուզում վերածվել ծեր ավերակի: Չէ՞ որ մենք դեռ աստղ ենք եւ մեզ համարում են կենդանի լեգենդ»:**

**2010-ին Միք Ջագերը հիմնեց իր նոր՝ «Super Heavy» խումբը:**

**Մ. Բ.**

# Գրքահավաք՝ Եղեգնաձորի քաղաքային գրադարանի համար

**Հայաստանի երիտասարդական հիմնադրամի Վայոց ձորի մարզային երիտասարդական կենտրոնն իրականացնում է գրքահավաք: Հավաքված գրքերը կտրամադրվեն Եղեգնաձորի քաղաքային գրադարանին:**

**Գրադարանը կարիք ունի նոր եւ թարմ գրականության՝ դրանով իսկ բավարարելով ընթերցասերների պահանջները: Բոլոր երիտասարդները, ովքեր ցանկություն ունեն մասնակցել գրքահավաքին եւ նվիրաբերել գրականություն, կարող են գրքերը բերել հիմնադրամի Վայոց ձորի մարզային երիտասարդական կենտրոն կամ զանգահարել հետեւյալ հեռախոսահամարով՝ 0281 2 54 42:**

*Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հասարակայնության հետ կապերի ծառայություն*
*Հեռ.՝ 010545802 (ներքին՝ 16), 093517112*
*E-mail: press@heh.am*
*http://heh.am/*

ՓԱՐԻԶ

# Կյանքից հեռացավ «Նավասարդ» պարախմբի հիմնադիր եւ ղեկավար Էդդի Ջոլոյանը



Ծանր հիվանդությունից հետո, Փարիզում հուլիսի 27-ին կյանքից հեռացավ ֆրանսահայ մշակույթի երախտավորներից մեկը՝ «Նավասարդ» պարախմբի հիմնադիր եւ գեղարվեստական ղեկավար Էդդի Ջոլոյանը:

Էդի Ջոլոյանը ծնվել է Փարիզում 1942 թ., գաղթական հայերի ընտանիքում: Ցեղասպանությունից փրկված նրա հայրը՝ Գրիգոր Ջոլոյանը, ով երիտասարդ տարիներին Կ. Պոլսի հայության մարզական կյանքի ակտիվիստներից էր, հայտնի լուսանկարիչ էր Փարիզում («Արաքս» լուսանկարչատուն), ֆրանսահայ համայնքի «լուսանկարչային կենսագիրը»: Էդիի հորեղբայրը նշանավոր պատմաբան եւ հայագետ Հակոբ Ջ. Սիրունին էր, ով 1920-ական թվականներին ապաստանել էր Ռումինիայում եւ դարձել տեղի նշանավոր դեմքերից մեկը: Մոր կողմից Էդին սերում էր Աջապահյանների նշանավոր տոհմից:

Ֆրանսիական հետեւակի պահեստի սպա եւ հմուտ կինեզիթերապեւտ Էդին իր իսկական կոչումը գտնում է պարարվեստում՝ 1958-1966թթ. պարելով հայկական «Սոսի» խմբում: 1967թ. նա հիմնում է «Նավասարդ» պարախումբը եւ մինչեւ կյանքի վերջ այն ղեկավարում: Շուտով «Նավասարդը» դառնում է Սփյուռքի ամենանշանավոր խմբերից մեկը, ելույթներ ունենում Ֆրանսիայի եւ աշխարհի հռչակավոր բեմերում (Փարիզի Զենիթ) Zenith, Համագումարների պալատ/Le Palais des Congrs, Շանզ Էլիզեի թատրոն/Le Thetre des Champs Elysees, Բոբինո/Bobino, Օլիմպիա/LOlympia, Կազինո դը Պարի/Casino de Paris, Նյու Յորքի Կարնեգի Հոլ/Carnegie Hall, Լոնդոնի Ռոյալ Ալբերտ Հոլ/Royal Albert Hall, Մյունխենի Գերմանական թատրոն/Deutsche Theater եւ այլն), արժանանալով ֆրանսիական եւ միջազգային մամուլի բարձր գնահատականներին: 2001 թ. «Նավասարդը» ելույթներ ունեցավ նաեւ մայր հայրենիքում՝ Երեւանում ու Ստեփանակերտում:

Ելույթներին զուգընթաց Էդին հիմնում է «Նավասարդի» պարի դպրոցը, որի ծոցից դուրս են եկել պարողների եւ երաժիշտների մի փաղանգ սերունդներ, օտարների համար պարի վարպետության դասերի միջոցով հայկական պարը ծանոթացնում եւ տարածում է եվրոպական հարթակի վրա:

Խորապես նվիրված հայ մշակույթին եւ հայ կյանքին՝ Էդին նվիրվածությամբ ծառայում է նաեւ Ֆրանսահայ հիմնադրամին, դառնում նրա անբասիր գանձապահը:

Նրան շնորհվել է ֆրանսիական Արժանիքի օրդենի ասպետի աստիճան, պարգեւատրվել է Ֆրանսիայի մշակույթի նախարարության Ոսկե մեդալով, ընտրվել ՅՈՒՆԵՍԿՕ-ի Պարի միջազգային խորհրդի անդամ:

Էդին արժանացել է նաեւ Հայաստանի մշակույթի նախարարության պատվոգրին, Սփյուռքում եւ Հայաստանում թողել ազգային եւ համամարդկային արժեքներին խորապես նվիրված մարդու հիշատակ:

ԼՈՆԴՈՆ

# Դոկտ. Ասլանյանը Լոնդոնի «Հայ տան» հյուր

«Նավահանգստային քաղաքներ եւ տպագրիչներ»: Խորհրդածություններ վաղ շրջանի հայկական տպագրության շուրջ» խորագրով հուլիսի 12-ին դասախոսություն է կարդացել Լոս Անջելեսի Կալիֆոռնիա համալսարանի (UCLA) արդի հայկական պատմության ամբիոնի վարիչ, դոկտ. Սեպուհ Ասլանյանը Քենսինգտոնում (Լոնդոն) գտնվող «Հայ տուն» մշակույթի կենտրոնում:

Հարգարժան պրոֆեսորը չափազանց գրավիչ կերպով ներկայացրել է հայկական նավահանգստային քաղաքների դերը հայ գրատպության ոլորտում: Նա կոչ է արել հայկական ուսումնասիրություններում այսուհետեւ առավել մեծ տեղ հատկացնել «ջրակենտրոն» (aquacentric) հայկական համայնքներին: Բրիտանական գրադարանում (British Library) պահվող վախճանված հայերի գույքագրացուցակները՝ կազմված «East India Company» ընկերության կողմից, ըստ նրա՝ ավելի լուրջ ուսումնասիրությունների կարիքն ունեն:

Դոկտ. Ասլանյանի դասախոսությունը մեծ հետաքրքրություն է առաջացրել: Ավելացնենք, որ պրոֆեսորը նման դասախոսություններով հանդես է գալիս տարբեր երկրներում եւ քաղաքներում: Անցյալ տարվա նոյեմբերին Լոս Անջելեսի Կալիֆոռնիա համալսարանի «Ռոլֆ» դահլիճում իր նախաձեռնությամբ անցկացվել էր գիտաժողով՝ նվիրված հայ տպագրության անցած հինգ դարերի պատմությանը:

Հ. Ծ.

# Հենրիխ Մխիթարյանը մրցաշրջանի 50 լավագույն ֆուտբոլիստների ցանկում



Հայաստանի հավաքականի եւ Դորտմունդի «Բորուսիայի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանը Goal.com կայքի վարկածով ընդգրկվել է անցած մրցաշրջանի 50 լավագույն ֆուտբոլիստների ցանկում՝ զբաղեցնելով 43-րդ հորիզոնականը:

Ահա թե ինչպես է բնութագրել Մխիթարյանին կայքի թղթակիցը. «Տպավորիչ մրցաշրջանից հետո Հենրիխ Մխիթարյանն ընդգրկվեց Goal.com-ի վարկածով տարվա 50 լավագույն ֆուտբոլիստների ցանկում: Նախորդ մրցաշրջանում Հենրիխը հասավ ինչպես անհատական, այնպես էլ թիմային հաջողությունների: Մխիթարյանը դարձավ Ուկրաինայի առաջնության լավագույն ռմբարկու՝ սահմանելով արդյունավետության նոր ռեկորդ (25 գոլ): «Շախտյորի» կազմում Հենրիխը նվաճեց Ուկրաինայի չեմպիոնի եւ գավաթակրի տիտղոսները, պաշտոնական մրցումներում 29 գոլի հեղինակ դարձավ: Դա լավագույն արդյունքն է Goal.com-ի ցուցակում ընդգրկված կիսապաշտպանների մեջ:

Հիանալի արագության, կայծակնային մեկնարկի եւ գրոհը եզրափակելու գերազանց ունակության շնորհիվ 24-ամյա կիսապաշտպանին համեմատում են Ֆրենկ Լեմփարդի եւ Մարեկ Համշիկի հետ: Պատահական չէ, որ «Շախտյորի» կազմում հաջող ելույթներից հետո Հենրիխին ձեռք բերեց Դորտմունդի «Բորուսիան»: Հայ կիսապաշտպանն արժանի փոխարինող է համարվում Մարիո Գյոտցեին»:

Ի դեպ, Մխիթարյանն արդեն «Բորուսիայում» վերսկսել է մարզումները: Նա առայժմ թեթեւ վազք եւ գնդակով վարժություններ է կատարում: Հիշեցնենք, որ Հենրիխը վնասվածք էր ստացել հուլիսի 16-ին շվեյցարական «Լյուցեռնի» հետ կայացած ընկերական մրցավեճում: Գոլ խփելուց հետո նա ցավեցրել էր ոտքը, որի պատճառով չէր կարողացել շարունակել հանդիպումը: Բժիշկները նրա ապաքինման համար 4 շաբաթ են նախատեսել:

Goal.com-ի վարկածով, անցած մրցաշրջանի լավագույն ֆուտբոլիստ է ճանաչվել «Բարսելոնի» հարձակվող Լիոնել Մեսին: Նա դարձավ յուրօրինակ հեթ-տրիկի հեղինակ: Մեսին լավագույնն է ճանաչվել նաեւ 2009-ին եւ 2011-ին:

2-րդ տեղը զբաղեցրել է Մյունխենի «Բավարիայի» հարձակվող Ֆրանկ Ռիբերին: Լավագույն եռյակը եզրափակել է Մադրիդի «Ռեալի» հարձակվող Քրիստիանու Ռոնալդուն: Վերջինս 2 անգամ՝ 2008-ին եւ 2012-ին Goal.com-ի վարկածով տարվա լավագույն ֆուտբոլիստի մրցանակին է արժանացել:

Լավագույն տասնյակում տեղ են զբաղեցրել նաեւ Թոմաս Մյուլլերը («Բավարիա»), Արիեն Ռոբենը («Բավարիա»), Գարեթ Բեյլը («Տոտենհեմ»), Ֆիլիպ Լամը («Բավարիա»), Տիագո Սիլվան (ՊՍԺ), Արտուրո Վիդալը («Յուվենտուս») եւ Ռոբին վան Պերսին («Մանչեսթեր Յունայթեդ»):

## Էմենիկեն հավանաբար հեռանա «Սպարտակից»



Թուրքական «Ֆեներբահչեն» Մոսկվայի «Սպարտակի» հետ համաձայնության է եկել նիգերիացի հարձակվող Էմանուել Էմենիկեի տեղափոխության հարցում: «Ֆեներբահչեն» պատրաստ է 13 մլն եվրո վճարել: Հետաքրքրական է, որ Էմենիկեն «Սպարտակ» էր տեղափոխվել 2011-ին հենց «Ֆեներբահչեից» 10 մլն եվրոյի դիմաց: Զավեշտալին այն է, որ նա թուրքական թիմի կազմում այդպես էլ ոչ մի խաղ չի անցկացրել:

2011-ին նա հանդես էր գալիս թուրքական «Կարաբյուկսպորում»: «Ֆեներբահչեի» հետ հանդիպումը «Կարաբյուկսպորը» տանուլ տվեց: Հետաքննությամբ պարզվեց, որ խաղը պայմանավորված է եղել: Իսկ գլխավոր մեղավորներից մեկը Էմենիկեն էր, որը խաղին չէր մասնակցել: Նրան մեղադրեցին միտումնավոր խաղին չմասնակցելու մեջ, որի դիմաց խոստացել էին, որ Էմենիկեն կտեղափոխվի «Ֆեներբահչե»: Նա իրոք շուտով տեղափոխվեց Ստամբուլ: Հետաքննության ժամանակ նիգերիացի ֆուտբոլիստը նույնիսկ 4 օր անցկացրեց բանտում: Նրան 1-3 տարվա բանտարկություն էր սպառնում: Ուստի երբ «Սպարտակից» առաջարկ ստացավ, անմիջապես ընդունեց հրավերը: Ճիշտ է, հետագայում նրա վրայից հանեցին մեղադրանքը:

«Սպարտակում» Էմենիկեն 50 խաղում 23 գոլի հեղինակ է դարձել եւ հարձակման գծում Յուրա Մովսիսյանի մրցակիցն է: Հիշեցնենք, որ «Դինամոյի» հետ խաղում «Սպարտակի» գլխավոր մարզիչ Վալերի Կարպինը Մովսիսյանին խաղադաշտ չմտցրեց՝ նախընտրելով Էմենիկեին: Այնպես որ, եթե Էմենիկեն հեռանա «Սպարտակից», ապա Մովսիսյանը թիմի հիմնական կազմում կհայտնվի:

Ճիշտ է, չի բացառվում, որ «Սպարտակում» նոր ֆուտբոլիստներ հայտնվեն: Ակումբի ղեկավարությունը հետաքրքրված է Բրազիլիայի հավաքականի եւ «Ատլետիկո Մինեյրոյի» հարձակվող Ժոյով, որը ժամանակին հանդես է եկել Մոսկվայի ԲԿՄԱ-ում, ինչպես նաեւ «Վալենսիայի» ֆուտբոլիստ Ռոբերտո Սոլդադոյով:

## Սուարեսի համար 50 մլն ֆունտ ստեռլինգ պետք է վճարել

Լոնդոնի «Արսենալը» շարունակում է ջանքեր թափել «Լիվերպուլի» ուրուգվայցի հարձակվող Լուիս Սուարեսին գնելու համար: «Արսենալը» Սուարեսի համար 40 մլն ֆունտ ստեռլինգ է առաջարկում, սակայն «Լիվերպուլը» հայտարարել է, որ 50 մլն ֆունտից ցածր առաջարկները չի քննարկելու:

ՇԱԽՄԱՏ

## Գրիգորյանը հավակնում է գլխավոր մրցանակին

Իտալիայի շախմատի մրցաշարում վստահ ելույթներն է շարունակում Կարեն Գրիգորյանը, որն ավարտական տուրից առաջ 7 միավորով շարունակում է գլխավորել աղյուսակը: 8-րդ տուրում նա սպիտակներով հաղթեց Կարեն Մովսիսյանին: Ավարտական տուրում Գրիգորյանը սեւերով խաղալու է իրենից կես միավորով հետ մնացող Ալեքսեյ Բարսովի հետ: Հենց այդ պարտիայում էլ կորոշվի գլխավոր մրցանակի տերը: Հաղթողի հավակնորդ է նաեւ 6,5 միավոր ունեցող Դանիել Պուլվետը, որը պարտության մատնեց Հովիկ Հայրապետյանին: Վերջինս 5 միավորով 14-րդ տեղում է: Կարեն Մովսիսյանը 5,5 միավորով 9-րդն է:

## Ղարամյանն առաջին պարտությունը կրեց

Բիլի շախմատի մրցաշարի 8-րդ տուրն անհաջող էր Տիգրան Ղարամյանի համար, որն առաջին պարտությունը կրեց: Նա սեւերով խաղում էր իր հետ աղյուսակը գլխավորող հնդիկ գրոսմայստեր Պենտալա Հարիկրիշնայի հետ: Այդ անհաջողությունից հետո Ղարամյանը 5,5 միավորով նահանջեց 6-րդ հորիզոնական: Իսկ աղյուսակը 6,5 միավորով գլխավորեց Հարիկրիշնան: 6-ական միավորով նրան հետապնդում են Մաքսիմ Բարտելը, Դրագան Սոլակը եւ Բու Քսյանզին:

9-րդ տուրում Ղարամյանը սպիտակներով կխաղա թուրք Դրագան Սոլակի հետ:

## Սարգիս Շահինյանը հանդես կգա «Բրագայում»

Մոտ օրերս Հայաստանի երիտասարդական հավաքականի եւ «Միկայի» կիսապաշտպան Սարգիս Շահինյանը կմեկնի Պորտուգալիա: Նա մեկ տարի վարձավճարով կխաղա տեղի «Բրագայում»: Հնարավոր է, որ հետագայում ֆուտբոլիստը վերջնականապես տեղափոխվի պորտուգալական ակումբ:

Հիշեցնենք, որ 17-ամյա Սարգիս Շահինյանը դեռեւս մայիսին հաջող փորձաշրջան էր անցել «Բրագայում»:

## «Միկայի» 4-րդ նորեկը

Օրերս «Բանանցից» հեռացած Սարգիս Կարապետյանը նոր մրցաշրջանում հանդես կգա «Միկայում»՝ դառնալով թիմի 4-րդ նորեկը: Ավելի վաղ «Միկայի» հետ պայմանագիր էին կնքել «Իմպուլսից» թիմ վերադարձած Հայկ Իշխանյանը, դիլիջանյան թիմի դարպասապահ Գոռ Էլյազյանը եւ նախկին շիրակցի Լեւոն Փաչաջյանը:

## Մելքումյանն առաջին կես միավորը կորցրեց

Դանիայի շախմատի մրցաշարի 5-րդ տուրում Հրանտ Մելքումյանն առաջին կես միավորը կորցրեց: Նա ոչ-ոքի խաղաց Կժիժտոֆ Բուլսկու հետ: Առաջատարն Իվան Չեպարինովն է, որը 5-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց: Նրա մրցակիցը Սեբաստիան Մազեն էր:

## Դոլուխանովան հաղթողին զիջեց կես միավորով

Ֆրանսիայի Ավուան քաղաքում անցկացված շախմատի մրցաշարում Հայաստանի միակ ներկայացուցիչ Եվգենիա Դոլուխանովան 9 հնարավորից վաստակած 6,5 միավորով 375 մասնակիցների մեջ զբաղեցրեց 12-րդ տեղը: Նա ընդամենը կես միավոր զիջեց մրցաշարի հաղթող, ռումինացի Վլադ-Քրիստիան Ժիանուին:

Դոլուխանովան մրցաշարում անպարտելի մնաց: Նա հաղթեց Ռաֆայել Դուտրեուլին, Բերտրանտ Գրոլեմանդին, Գրեգուարի Նաուդինին եւ Լեներտ Լենստերտսին, հաշտություն կնքեց Կառլ Մեսինգերի, Ալեքսանդր Ջեբուաձեի, Կոստին Միրոնի, Կամրան Շիրազիի եւ Մաքսիմ Լագարդեի հետ:

## Հյոնեսին մեղադրում են հարկերի վճարումից խուսափելու մեջ



Մյունխենի դատախազությունը «Բավարիայի» նախագահ Ուլի Հյոնեսին մեղադրանք է առաջադրել հարկերից խուսափելու համար: Խոսքը 10 մլն եվրոյի մասին է: Հետաքննությամբ պարզվել է, որ նա շվեյցարական բանկերից մեկում չհայտարարագրված հաշիվ ունի, որն օգտագործել է, որպեսզի հարկեր չվճարի:

Ամեն ինչ սկսվեց մարտին, երբ Մյունխենի ոստիկանությունը Հյոնեսի գրասենյակում եւ տանը խուզարկություն կատարեց: Նրան բանտարկություն էր սպառնում, սակայն 1 մլն եվրո գրավի դիմաց մնաց ազատության մեջ: Հաշվի էր առնվել նաեւ այն փաստը, որ Հյոնեսը գրավոր խոստովանել էր հարկերի վճարումից խուսափելու մասին:

Մայիսին Մյունխենի դատախազությունը կրկին շարունակեց հետաքննությունը եւ այժմ նոր մեղադրանք է ներկայացրել: «Բավարիայի» նախագահը մեկ ամիս ժամանակ ունի, որպեսզի պատասխանի հետաքննության բոլոր հարցերին: Հակառակ դեպքում նրա գործը կարող է հայտնվել դատարանում: Սակայն լրատվամիջոցների կարծիքով Հյոնեսը բանտում չի հայտնվի: Նա կարող է 2 տարվա պայմանական բանտարկության դատապարտվել եւ ֆինանսական լուրջ պատժամիջոցների ենթարկվել:

Հյոնեսի դեպքը եզակի չէ: Վերջերս հարկերից խուսափելու մեջ մեղադրեցին Լիոնել Մեսիին: Խոսքը 4 մլն եվրոյի մասին էր: Ի դեպ, Մեսին ինքնակամ հարկային մարմիններին 10 մլն եվրո էր վճարել՝ կարճելով գործը:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

ԱԶԳ

# Օրվա հետքերով

## Եգիպտոսի արտգործնախարարությունը երկրորդ նոտան է հանձնել Թուրքիայի դեսպանին

Եգիպտոսում իրականացված հեղաշրջման հանդեպ Թուրքիայի վարչապետ Էրդողանի դիրքորոշումը հայտնի է: Նա հեղաշրջման միջոցով Եգիպտոսի ընտրված նախագահին պաշտոնանկ անելու համար ամենախիստ կոչով դատապարտել էր եգիպտական բանակին, ձայնակցելով «Մուսուլման եղբայրներին», պահանջել էր պաշտոնում վերականգնել Մուհամմեդ Մուրսիին, ավելին՝ խստագույնս քննադատել էր ՄԱԿ-ին, Եվրոմիությանը, ԱՄՆ-ին եւ արաբական երկրներին, որ չեն հակազդում հեղաշրջմանը:

Հուլիսի 26-ին բանակի եւ ցուցարարների բախումից հետո, որը հանգեցրեց 200 ցուցարարի սպանության, Էրդողանն այս միջադեպը համարեց կոտորած եւ հայտարարեց. «Նրանք, ովքեր լռությամբ շրջանցում են այս կոտորածը, դրա մասնակիցներն են նաեւ: Մենք վայրագության մասնակիցը չենք լինի: Մենք երբեք անարդարությունը հանդուրժող համր սատանա չենք դառնա: Եգիպտոսում ոչնչացվել է ժողովրդավարությունը եւ դաժանորեն ոտնահարվել ժողովրդի ազատ կամքը»:

Այս խոսքերի գլխավոր հասցետերն անշուշտ Եգիպտոսի պաշտպանության նախարար, եգիպտական զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, փոխվարչապետ գեներալ ալ Սիսին էր, եւ պատասխանը չուշացավ: Թուրքիայի վարչապետի եւ այլ ղեկավարների համանման սանձարձակ հայտարարությունների առնչությամբ հուլիսի 30-ին, ինչպես «Ալ Ահրամ» թերթն է նշել, կրկին արտգործնախարարություն հրավիրվեց Եգիպտոսում Թուրքիայի դեսպան Հուսեյն Ավնի Բոթսալին երկրի ներքին գործերին խառնվելու պատճառով, որտեղ նրան հանձնվեց երկրորդ նոտան:

Ըստ «Ալ Ահրամի», Եգիպտոսի իշխանությունները որպես «բացահայտ միջամտություն» են որակել Թուրքիայի ղեկավարների հայտարարությունները, զգուշացրել են Թուրքիայի դեսպանին, որ դրանք հակասում են դիվանագիտական էթիկայի կանոններին ու ոտնահարում փոխադարձ հարգանքի սկզբունքը: Եգիպտական թերթի վկայությամբ, թուրք դեսպանին արտգործնախարարությունում հիշեցրել են վարչապետ Էրդողանի հետեւյալ խոսքերը. «Եգիպտոսի նախագահը ինձ համար շարունակում է մնալ Մուրսին, որովհետեւ նրան ժողովուրդն է ընտրել»:

Ի դեպ, հուլիսի 30-ի նոտան երկրորդն է: Առաջինը Եգիպտոսում Թուրքիայի դեսպանին «Եգիպտոսի ներքին գործերին միջամտելու եւ ՄԱԿ-ին միջամտության կոչ անելու» պատճառով ներկայացվել էր հուլիսի 10-ին նույնպես արտգործնախարարությունում: Թվում է, թե 20 օրում 2 նոտա ներկայացնելը անսովոր է միջազգային պրակտիկայում, սակայն չմոռանանք, որ վարչապետ Էրդողանն էլ զսպվածություն դրսեւորելու սովորություն չունի: Հետեւաբար մնում է սպասել երրորդ նոտային:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

## Ռուստամ Իբրահիմբեկով. ընդդիմադիր թեկնածո՞ւ, թե՞ Կրեմլի գործակալ

*1-ին էջից*

Իսկ Մոսկվայում կարծես չեն շտապում հարցին լուծում տալ: Երեկ haqqin.az-ը ՌԴ նախագահին առընթեր քաղաքացիության հարցերով հանձնաժողովից փորձել է պարզել՝ օրակարգո՞ւմ է Իբրահիմբեկովին քաղաքացիությունից զրկելու հարցը: Հետեւել է ստանդարտ-խուսափողական պատասխան՝ «դիմեք գրավոր»: Նույն լրատվամիջոցը կապ է հաստատել նաեւ Կրեմլի մամուլի ծառայության հետ, որտեղից ասել են, որ «քաղաքացիության հարցերով հանձնաժողովի հերթական նիստ իր հայեցողությամբ գումարում է ՌԴ նախագահը»:

Եթե ադրբեջանական լրատվամիջոցի փոխանցած տեղեկատվությունը համապատասխանում է իրականությանը, ապա հարկ է ենթադրել, որ Իբրահիմբեկովին քաղաքացիությունից զրկել-չզրկելու որոշումը Պուտին-Ալիեւ հարաբերություններում ձեռք է բերում սկզբունքային նշանակություն:

Բայց սա խնդրի մի կողմն է: Ծագում է տրամաբանական հարցադրում. նախագահի թեկնածու առաջադրվելու մտադրություն Ռուստամ Իբրահիմբեկովը հայտնել էր ավելի քան մեկ տարի առաջ՝ գտնվելով դեռեւս Ադրբեջանում: Եվ եթե դա լուրջ էր, ապա ինչո՞ւ ՌԴ քաղաքացիությունից հրաժարվելու գործընթաց նա ավելի վաղ չի սկսել, այլ սպասել է մինչեւ «վերջին պահը»:

Ասել, թե Իբրահիմբեկովը տեղյակ չէր, որ լինելով երկքաղաքացի՝ չի կարող հավակնել Ադրբեջանի նախագահի պաշտոնին, նշանակում է՝ նրան դնել քաղաքական «անմեղսունակի» տեղ, ինչը բացառվում է: Այդ դեպքում ո՞րն է «խաղի իմաստը»: Կարող է չափազանցված թվալ, բայց ինչո՞ւ բացառել, որ «քավության նոխազի» դերակատարություն Իբրահիմբեկովն ստանձնել է կամավոր՝ ընդառաջելով Կրեմլի քաղտեխնոլոգներին:

Այսինքն, օրակարգային դարձնելով Ադրբեջանում Իլհամ Ալիեւին քաղաքական լուրջ հակակշիռ ձեւավորելու հարցում Մոսկվայի վճռորոշ դերակատարության գործոնը, Ռուստամ Իբրահիմբեկովը պաշտոնական Մոսկվայի համար բացել է Ադրբեջանի վրա ազդեցության լայն ճակատ: Այնքան, որ իրեն քաղաքացիությունից զրկել-չզրկելու հարցը տեղափոխվի Պուտին-Ալիեւ հարաբերությունների տիրույթ:

Այս դեպքում, անշուշտ, խնդրի դերում է հայտնվում Իլհամ Ալիեւը, որի ներքաղաքական ռեսուրսներն այնքան սուղ են, որ երկյուղում է մրցակցել պետական կառավարման ոչ մի փորձ չունեցող եւ, ըստ էության, լայն ժողովրդականություն չվայելող Ռուստամ Իբրահիմբեկովի հետ անգամ: Պաշտոնական Բաքվին օդ ու ջրի պես անհրաժեշտ է, որ Իլհամ Ալիեւի «մրցակից» լինի կանխատեսելի-կառավարելի մեկը:

Եվ այս վճռական պահին «Ռուստամ Իբրահիմբեկով» անվանված «երկճյուղ մտրակը» հայտնվում է Վլադիմիր Պուտինի ձեռքում: Փաստորեն նրա որոշումից է կախված՝ կպայթի՞ Ադրբեջանում իրավիճակը, թե՞ ոչ: Ի՞նչ գին պիտի վճարի Իլհամ Ալիեւը, որպեսզի «մտրակը չշաչի»: Ի՞նչ «կառաջարկի» Վլադիմիր Պուտինը: Սրանք այս պահին անպատասխան հարցեր են: Ակնհայտ է, թերեւս, որ Ռուստամ Իբրահիմբեկովը չի առաջադրվի Ադրբեջանի նախագահի թեկնածու: Նա արել է իր գործը, նա կարող է «պատվով» հեռանալ:

Վ. Ա.

ԱՎՍՏՐԱԼԻԱ

## Ներդաշնակության ջատագովը

### *Հանդիպում Ստեփան Քրքյաշարյանի հետ*



**Եղեռնից մազապուրծ գաղթականների որդի է Ստեփան Քրքյաշարյանը: Վերջին մոտ 25 տարիների ընթացքում Ավստրալիայի Նոր Հարավային Ուելսի «Համայնքային հարաբերությունների հանձնաժողովը» ղեկավարելուց հետո նա մտադիր է սեպտեմբերին չվերանորոգել իր պայմանագիրը այդ պաշտոնում: Նա աշխատակցել է վեց վարչապետների հետ, որոնք բարձր են գնահատել ներդաշնակություն սերմանելու նրա ջանքերը: Յոթերորդ վարչապետ Բարրի Օ'Ֆարելը նրան բնութագրել է որպես «բազմամշակութային կապերի հերոսի»: Յոթանասունի շեմը հասած գործիչը Կիպրոսում է հասակ առել՝ շրջապատված հույն, հայ, անգլիացի եւ թուրք դասընկերներով: Գուցե դա է պատճառը, որ նա Սիդնեյում հաստատվելուց հետո իմտորեն է կարողացել լեզու գտնել կառավարական ծառայողների եւ ներգաղթյալների հետ, երբեմն անհաղթահարելի թվացող ռասայական լարվածությունները խելամտորեն հաղթահարելով:**

**«Կիպրոսի անգլիական դպրոցում հույները նստում էին մի շարքում, թուրքերը՝ մյուս, իսկ մեջտեղի շարքում հայերն էին, մարոնիտները եւ անգլիացիները: Ոչ մի ուսուցչի մտքով չէր անցնում մեզ տեղափոխել մեր տեղերից», հիշում է նա՝ ավելացնելով, որ Նիկոսիայում իր ծնողների տունը ընդամենը 30 մետր էր հեռու հունա-թուրքական բաժանման գծից: 1960-ին 17 տարեկանում եւ ընդամենը 10 ֆունտ ստեռլինգով իր գրպանում նա տեղափոխվել է Լոնդոն, որտեղ մասնագիտացել է էլեկտրոնիկայի բնագավառում: Լոնդոնում նա նաեւ ծանոթացել է իր ապագա կնոջ՝ հնդկահայ Բրենդայի հետ եւ 1967-ին վերջնականապես հաստատվել Ավստրալիայում: Այնտեղ նա աշխատել է բժշկական սարքավորումների ընկերությունում՝ միաժամանակ ամուր կապ պահպանելով տեղաբնակ հայերի հետ:**

**Բրենդան նրան երեք զավակ է պարգեւել, բայց, ավաղ, 1988-ին բժշկական սխալ միջամտության հետեւանքով 39 տարեկանում մահացել է: Այդ նույն տարին Քրքյաշարյանը դարձել է «Էթնիկական գործերի հանձնաժողովի» նախագահ: Նա նրբանկատ է եւ ունի հումորի գերազանց զգացում: Նաեւ գիտի լսել մարդկանց դժգոհությունները: Իր նախաձեռնությամբ մի շարք ծրագրեր են մշակվել նպաստելու միջհամայնքային ներդաշնակությանը:**

**«Բռնությունն ու ատելությունը ղեկավարներն են սերմանում, ոչ թե հասարակ մարդիկ», համոզված է նա:**

**Երեք տարի առաջ նա Հայաստան է այցելել առաջին անգամ, իր երկրորդ կնոջ՝ Հիլդայի ուղեկցությամբ, որի հետ ծանոթացել է տասնհինգ տարի առաջ:**

Ըստ Ռիկ Ֆենելիի (Սիդնեյ) հոդվածի՝ պատրաստեց
Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆԸ

## Իսպանական աղետյալ գնացքի մեքենավարը վթարից առաջ խոսել է հեռախոսով



**Իսպանիայի հյուսիսում՝ Գալիսիայում հուլիսի 24-ի երեկոյան ռելսերից դուրս թռած գնացքի մեքենավարը աղետից մի քանի րոպե առաջ օգտվել է ծառայողական հեռախոսից: Այդ մասին հաղորդում է El Mundo թերթը՝ վկայակոչելով դատարանին ներկայացված գնացքի «սեւ արկղերի» տվյալները: Զրույցների վերծանումից դատելով՝ մեքենավար Ֆրանսիսկո Խոսե Գարսոն Ամոն նաեւ ուսումնասիրել է «քարտեզ կամ մեկ ուրիշ փաստաթուղթ»:**

**Մեքենավարի հեռախոսային զրուցակիցը եղել է Renfe երկաթուղային ընկերության չվակարգիչը: Նա Գարսոն Ամոյին հրահանգներ է տվել Ֆեռոլ հասնելու առնչությամբ, քանի որ մեքենավարը վաս էր կողմնորոշվում երթուղու հարցում:**

**Սանտյագո-դե-Կոմպոստելա քաղաքի մատույցներում գնացքը սլացել է ժամում 192 կմ արագությամբ, թեեւ այդ ուղեմասում Renfe-ի սահմանած առավելագույն արագությունը 80 կմ/ժամ է: Բարդ շրջադարձից առաջ Գարսոն Ամոն ուշացումով միացրել էր արգելափակումը եւ արագությունն իջեցրել ժամում 153 կիլոմետրի, բայց գնացքը դուրս է թռել ռելսերից:**

**Աղետի հետեւանքով զոհվեց 79 մարդ, հիվանդանոց տարված 130 ուղեւորներից շատերը մնում են ծանր կամ օրհասական վիճակում:**

**Աղետից հետո կալանավորված, ապա գրավի դիմաց ազատ արձակված Գարսոն Ամոն մեղադրվում է անփութության մեջ: Միջադեպի պաշտոնական վարկածը դեռ չի հրապարակվել, սակայն ենթադրվում է, որ վթարը տեղի է ունեցել արագության գերազանցման հետեւանքով:**


## ՌԱԿ կենտրոնական գրասենյակը՝ նոր հասցեում

Ռամկավար Ազատական կուսակցության կենտրոնական գրասենյակը, որը ցարդ գործում էր Կորյունի 19ա հասցեում, այսուհետեւ կշարունակի գործել Հանրապետություն (նախկին Ալավերդյան) փողոցի 47 շենքի 2-րդ հարկում, հետեւյալ հեռախոսահամարներով.- (374)060-271114, (374)91-566845, (374)77-566845:

Էլ. հասցե՝ ramkavar@gmail.com

**Սրբագրում եւ խմբագրում**
**ամեն ծավալի ու բովանդակության հայերեն տեքստերի, գրքերի**
**E–mail: xachagox@mail.ru,**
**հեռ.՝ 094 48-68-03**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112


Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 31.7.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: